

Բաժանորդագին կԱՆՆԻԿ Թուրքիոյ համար տարեկան 50 զրշ, Ռուսիոյ համար 5 ռուբլի. ուրիշ երկիրներու համար 12 ֆր: Վեցամսեայ եւ եռամսեայ բաժանորդագրութիւնք եւս կ'ընդունուին:

Գաւառներէն Օսմանեան նամակագրոջմ կ'ընդունուի 1 զրշ նոցը 34 փարսյի հաշուով, կամ 100 զրուշի փոխարէն 115 զրշ: ԵԱՂԻԿԻ վերաբերեալ ամէն գործի համար դիմել:

Առ Տնօրէն-Հրատարակիչ  
ՅՈՎՆԱՆ Գ. ՓԱԼԱԿԱՇԻԱՆ  
Պոլիս, Պահչէ-Գարու, Թաշխան, քիւ 50

# ԾԱՂԻԿ

Լ Ր Ա Պ Ի Ր

در علیہ دہ بیچہ قیوسندہ طاش خاندہ  
ہ ہ نومرودہ « زایک » غزہ سی مدیری  
بالاقشیان حوونان

S'adresser à  
HOVNAN PALACACHIAN  
Directeur du journal arménien «Zaghik»  
Rue Bahtché-Kapou, Tach Han, 50  
CONSTANTINOPLE

40 փարս Ազգային, Բաղաճական եւ Գրական 40 փարս

ՆՈՐ ԵՐԶԱՆ — Բ. ՏԱՐԻ. ԹԻԻ 6

Շ Ա Բ Ա Թ

23 ՆՈՅԵՄԲԵՐ 1891

ԳՐԱՍԵՆԵԱԿ

## ՅԱՆՁՆԱԿԱՏԱՐՈՒԹԵԱՆ

ԵԱՂԻԿԻ Տնօրէնութիւնը պատիւունի ծանուցանել իւր ընթերցողաց թէ, գոհացումն տալու համար այն ինքրանաց զորս յաճախ կ'ընդունի, հաստատած է Յանձնակատարութեան Գրասենեակ մը:

Յանձնակատարութեան Գրասենեակը կը հայթայթէ մեծ և փոքր քանակութեամբ ամէն տեսակ ապրանք թէ՛ Պոլսոյ և թէ՛ եւրոպական հըրապարակներէն գնելի, ինչպէս, գիրք ամէն լեզուաւ, պատկերք, ձայնագրութիւնք, դպրոցական և դրասենեակի պիտոյք, ժամացուցի, տպարանական և այլ արհեստական գործիք, կտակեղէնք, ասուեղէնք, ըմպելիք, անուշահոտութիւնք, կահ կարասիք, և այլն, և այլն:

Վճարմունք կանխիկ են, բայց ի հարկին կարելի է պայմանաժամաւ եւս գործել այն տանց հետ որ կըրնան արտագրիչներն ապահովել. Փոխադրութեան ծախք կը պատկանին յաճախորդաց:

Յանձնակատարութեան Գրասենեակը կ'ստանձնէ նաեւ վաճառումն ներքին բերքերու թէ՛ Պոլսոյ և թէ՛ օտար հրապարակաց վրայ: Առ այդ կը բաւէ զրկել վաճառելի ապրանաց նմոյշները:

Յանձնակատարութեան Գրասենեակը կը փափագի ունենալ թղթակիցներ գաւառական քաղաքներու մէջ:

Թղթակցութիւնք պէտք է ուղղուին առ Յ. Գ. Փալագաշեան, Կ. Պոլիս, Պահչէ գարու, Թաշխան, քիւ 50:

ՅԱՆՁՆԱ ԱՊՐԱՆԱՑ ՀԻՒՍԱՐԱՆ ԵՒ ՎԱՃԱՌՍՏՈՒՆ

## ՆՍՈՒՆԵԱՆ ԵՂԲԱՐՑ

Ի Մանմուտ փաշա, Բիւրքեի խան, Թիւ 26 եւ 15, որոյ մասնաճիւղն է ի Պահչէ—Գարու, Մաքսատան կարգ, Թիւ 44 Թօհաֆիյէի վաճառատունը:



Թէ՛ մեծ եւ թէ՛ փոքր քանակութեամբ՝ արանց, կանանց և տղայոց համար՝ անխառն բրդէ, մանածէ, և այլն, ուղուած թանձրութեամբ և ուղուած չափով յանձնարարութիւնք կ'ընդունուին ու պատրաստ կը ծախուին Ֆանէլա շապիկներ, վարտիքներ, միսոցուներ, և այլն: Ապրանքները կը մրցին եւրոպականներուն հետ թէ՛ աժանութեամբ, թէ՛ դիմացկունութեամբ և թէ՛ իրենց նուրբ ճաշակով: Յաճախորդք ամէն կերպիւ գոհ պիտի մնան:

## Մոշրատեան Մկրտիչ և Յովհաննէս Եղբարց փաճառատունը

ԵՐԿԱԹԻ, ԽՈՒՐՏԱՎԱԹԻ, ԳՈՐԾԵԱՑ ԵՒ ԱՅԼՈՑ

Կ. Պոլիս, Ալաճա Համամ, Թիւ 44 եւ Ղալաթիա, Բէրշէմպէ բազար,

Մանմուտիլէ—ձատտէսի, Թիւ 70 եւ 59.

Ա՛գղիական, գաղղիական և ամերիկեան կարեւոր գործարանաց մէջ պատրաստեալ զանազան տեսակ երկաթեղէնք, ուսական կախիակաղալք (ասումա քիլիտի), հիւսան (տիւլկէր) գործիներ, եկեղեցական զանգակք, խարտոցք, զինկոյէ ամաններ, գործարանաց վերաբերեալ մեքենայք, երկրագործական բազմազան գործիներ, և այլն, և այլն, ամենքն ալ շատ աժան գներով: Ընկերութեանս մեքենագործն գիւրութիւններ կ'ընծայէ մեքենայից գործածութեան ուսման համար:

Կ. Պոլսէ և գաւառներէ ամէն ուղղակի յանձնարարութիւնք շուտ և կանոնաւոր կը կատարուին: Մեր քով չգտնուածներն ալ յանձնողչէքով եւրոպայէ բերել կուտանք և ուղուած տեղերն ու նաւահանգիստները կը փոխադրեմք:

Մեր վաճառատանց վարչութեան հասցէն է՝

Մ. Յ. ՄՈՒՐՍՏԵԱՆ ԵՂԲԱՐԻ

70, Եօրկանձըլար ձատտէսի, Ղալաթիա, Կ. Պոլիս

# FRATELLI GOLDENBERG

ԱՄԵՆԷՆ ՄԵԾ, ԱՄԵՆԷՆ ՀԻՆ, ԱՄԵՆԷՆ ՀԱՄԲԱՒԱԻՈՐ

## ՀԱՆԴԵՐՁԵՂԻՆԱՅ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՀԱՆՐԱԾԱՆՈՒ ՀԱՄԱՅՆ ԵՒՐՈՊ. ԹՈՒՐԿԻՈՑ, ԱՍԻԱԿԱՆ ԹՈՒՐԿԻՈՑ ԵՒ ԵԳԻՊՏՈՍԻ ՄԷՋ

### ՖՐԱԹԵՂԼԻ ԿՈՂՏԷՆՊԵՐԿԻ

Այս վաճառատունը կը յանձնարարուի հասարակութեան և ամէն մրցման կրնայ գլխադրել իւր կերպասուց ընտիր յատկութեամբը, պատրաստութեան տոկոսներով եւ արդ, ինչպէս նաեւ հանդերձին գեղեցիկ կարուածքովը:

ՊԼԵԱՒՈՐ ՄՓԵՐԱՆՈՑՔ Ի Կ. ՊՈԼԻՏ

Թիւնէլի քով Թիւ 2, Եւ Քարաքէօյի Կամուրջին գլուխը Թիւ 28

ՄԵԾԱՔԱՆԱԿ ԵՒ ՓՈՒՐՍՔԱՆԱԿ ՎԱՃԱՌՈՒՄԷ

Մ Ա Ս Ն Ա Ճ Ի Ի Ղ Ք

Հոստոս, Քափալա, Ռուսճուք, Զմիւռնիա, Վառնա, Պուրկաս, Փիլիպէ, Բոր-Սախտ, Սեւանիկ, Սամսոն, Մերսին, Քիոս, Թարսուս, Ատանա, Պէրուլ, Գամակաս, Տրիպոլիս (Սուրիական), Եաֆա, Աքեա, Ալեքսանդրիա, Գահիրէ, Եայլն, Եայլն:

### ԱՆՍՊԱԿ ԳԻՆԻ ԳՍՐԹԱՆԿ

Խ Ա Վ Ե Ս Ր — Խ Ա Ն, Թ Ի Ի 91

Վերջին ժամանակներս գինեջինութեան արդիւնաւորութեան վրայ յաճախ կը գրուին տեղական ազգային և օտարազգի լրագրաց մէջ, և գոհութեամբ կը շեշտուի սոյն ձեռնարկին մասնագէտ համարուող Սուքիատեան Յակոբ Էֆէնտիի անունը, որ իւր երկարամեայ փորձառութեամբն՝ Գարթալի զանազան խաղողներէ՝ ունեցած սեպհական և շրջակայից այգիներէն անձամբ կը պատրաստէ ընտրեւորոյն և անարատ գինիներ, որոց մէջէն յատուկ գնահատութեան արժանի են՝ ԳՍՐԱ.—ՉԱՎՈՒՇ, ՀՕՐԱ, ՀԱՃԻ—ՕՂԼՈՒ, ՔԷՉԻ—ՄԷՄԵՍԻ և ՆՈՒՐՆԻԿԵԱՐ խաղողներէն՝ սեւ գինի, ինչպէս նաեւ ՄԻՍՔԷԹ—ՉԱՎՈՒՇ ԳՍՈՒ.—ՉԱՎՈՒՇ, ՆՈՒՐՆԻԿԵԱՐ և ԳՍՐՈՒ—ՏԱՂԻ ըսուած խաղողներէն՝ ձերմակ և թէ աւել զգինիներ, որք մայրաքաղաքիս առաջնակարգ բժշկաց կողմէ եւս կը յանձնարարուին ամեն կարգի հիւանդաց: — Կը ծախուին շիշով պատրաստ, նաեւ քաշով և տակաւով: Յատկապէս յանձնարարելի են մեծածախ սեղաններու և խորխոսանաց հանդէսներու ու շքանշաններու համար: 4—15



ՔՆՈՒՉՈՒԷ ՄՈՒԿԱՆԵՐ (Լ Ա Ս Թ Ի Ք)



### ՀԱՆՐԱԾԱՆՈՒ ՆՈՐԹ ՊՐԻԹԻՇ ԲԻՊԷՐ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Մեր յաճախորդներու փափաքանաց համաձայն, մեր այս տարուան քառասունէ մուճակներն (լաստիք) շինուած են կոպրա բերքով, խիստ հոշակաւոր, նուրբ եւ հաստատուն: Պոլսոյ հրապարակին վրայ երկար առնէն ի վեր ճանչուած է թէ մեր քառասունէ մուճակները կը գերազանցեն քսան տարիէ ի վեր գործածուած բոլոր մուճակները: Մեր այս մուճակներու ներքին կողմը կշիռի մը և արտաքին կողմն ալ առիւծի մը պատկերը դրոշմուած է իբրեւ նշան: Կը գտնուին բոլոր քառասունէ մուճակ վաճառողներու քով: Կեդրոնատեղին է ի Պոլիս, Պահչէ Գարու, Գոճաման Յղու խան, Ճորճի Կիտրոյի թիւ 1 մթերանոցը:

### ԼԱՎԸՆԻՈՒ ՏԷ ՓԱՄԻՅԼ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓՈՒԱԴԱՐՁ ԸՆԿ. ՎԱՍՆ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹԵԱՆ ԴՐԱՄԱԿԼԵՈՑ

Կը գործէ ընդ հսկողութեամբ Գաղղիոյ կառավարութեան Կեդրոնատեղի՝ 61, Բէփիւպլիք փողոց, Լիոն (Ֆրանսա)

Ապահովութիւնը 100,000,000 ֆր

ԼԱՎԸՆԻՈՒ ՏԷ ՓԱՄԻՅԼ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆ, որ հաստատուած է նպատակաւ համար փոքր խնայողութեանց, աւրագ զարգացում մը ունեցած է: Իւր նպատակն է որոշեալ պայմանաժամի մէջ վերակազմել գրամագլուխն:

Ընկերութեան գործառնութիւնը բազմադիմի են, ինչպէս շարժական արժէքի և փոխ արուած գրամագլխոց ապահովագրութիւն, կորուսեալ գրամագլխոց մը վերակազմութիւն, Երաշխաւորութիւնք և Կլիսավճարք՝ փոխառութեանց և ճարտարաւեստից և վաճառականութեան մէջ գործածուած գըրամագլխոց, մանկանց համար օժիտք, շանգստեան սնտուկ ծերութեան համար, ցկեանս եկամուտներու կազմութիւն, ի մի բան այն ամէն գործառնութիւնք որոց նպատակն է խնայողութիւն: Ընկերութեան Պոլսոյ գործակալութիւնն սկսած է 1884 Յունուար 15-ն: Տեղեկութեանց եւ բաժանորդագրութեան համար գրիմել առ Բարսել Էֆէնտի թէլլաբան, գործակալ Ընկերութեան ի Կ. Պոլիս, Պահչէ—Գարու, Շէյխ—Իսլամ խան, թիւ 11:

### ԿԱՐԱՊԵՏ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ

Վաճառատուն Գէսի եւ Թօնաֆիլի

Կ. Պոլիս, Պահչէ-Գարու, Հաֆթի ճարտէսի, շատրվաճար Հահէ Պեփր ոչայի խանութի գէտիցի կողմ, թիւ 54

Ընտիր ֆէսեր ամէն տեսակէն, Պէզիկի և այլ խաղի թղթեր և մարքէթ: Ճաշակաւոր քաւաթիներ, թաշկինակ, գուլպայ, հոտաւէտ նիւթեր, բորթմոնէ, հովանոց, գաւազան, լաստիկ—կալոշ, եւ այլն:

Ճաշակաւոր ընտիր ապրանքներ չափաւոր գիներով:

### ԻՏԱԼԵՐԷՆ ԵՒ ԳՍՂՂԻԵՐԷՆ

Եւրոպա ուսած երկտասարդ մը պատրաստ է ստանձնել մասնաւոր դասեր Իտալերէնի և Գաղղիերէնի, վերջին նորուսոյց եղանակներով: Գրիմել յՄաղիկի Նմրագրատունը:

Բաժանորդագրին կԱՆԻԻԿ Թուրքիոյ Համար տարեկան 50 զրշ, Ռուսիոյ Համար 5 ռուբլի, ուրիշ երկրներու Համար 10 Ֆր:

Վեցամսեայ եւ եւամսեայ բաժանորդագրութիւնք եւս կ'ընդունուին: Գաւառներէն Օսմանեան նամակադրոշմ կ'ընդունուի՝ 1 զրշ: նոցը 31 փարսյի հաշուով, կամ 100 զրուշի փոխարէն 115 զրշ: ԵԱՂԻԿ Վերաբերեալ ամէն գործի համար Գրեմէ:

Առ Տնօրէն-Հրատարակիչ ՅԱՆՆԱՆ Գ. ՓԱՆԱԿԱՇԻԱՆ Պոլիս, Պառիզ-Դարու, Թաշխան, քիւ 50

# ՄԱՂԻԿ

## Լ Ր Ա Պ Ի Ր

### Ազգային, Քաղաքական եւ Գրական

40 Փարսա

40 Փարսա

درعليه ده بفتح قوسنده طاش خاند  
•• نومروده «زاغيك» غزتهسى مديرى  
بالاقاشيان حوونان

S'adresser à  
HOVNAN PALACACHIAN  
Directeur du journal arménien «Dzaghik»,  
Rue Bahtché-Kapou, Tach Han, 50  
CONSTANTINOPLE

ՆՈՐ ԵՐԶԱՆ — Բ. ՏԱՐԻ. ԹԻՒ 6 ՇԱԲԱԹ 23 ՆՈՅԵՄԲԵՐ 1891

#### ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՆՇՄԱՐՆԵՐ

Գ Ր Ա Դ Ա Տ Ո Ւ Թ Ի Ի Ն

Արխսակէս եպիսկոպոս Սեդրակեանի «Ամուսնական հնդիքներ» գրքին վրայ<sup>(1)</sup> Ի Բժիշկ Միսաք Արամեանէ

«Եթէ եերադեմք անգամ, որ այս կամ այն ժողովուրդը կը գտնուի քայքայման վիճակի մէջ, այսու հանդերձ եթէ եկեղեցին կը բարոզ մտաւոր աւետարան եւ ժողովուրդը ունկնդիր է, եւ եթէ ընտանեկան կեանքը ունայն է՝ — մինչեւ այն ժամանակ կազմալուծուող ժողովուրդն կարող է բժշկուիլ: Այն ժամանակ անբուժելի է ժողովրդեան մը վիճակը, երբ եկեղեցին ու ընտանիքը սկսած է քայքայուիլ եւ կազմալուծուիլ: Իսկ երբ հասած է ծայր աստիճանի» ՄԱՐԹԻՆՍ

Ա.

Ամէն մի մտածող հայ, որ եւրոպական հւշակ ունեցող աստուածաբան եւ բարոյաբան Մարթիանի դաւանութեան ճշմարտութիւնը կարող է ստուգել ազգաց, պատմութեան վկայութիւններով, — անկարող է զսպել իւր վրդովմունքը

(1) Տպեալ ի Մոսկուա, 1891: Գրողատեղիքը հրատարակուած է Թիֆլիսի ամենօրեայ «Նոր-Դար» լրագրոյն մէջ, ուրիշ կ'արտատպենք: Արխատակէս եպիսկոպոս ժողովրդականութիւնը շահելու համար սոյն գիրքը պատրաստելով եւ Տէր Մակար Սրբազանի կենաց վերջին երկու ամսոց միջոցին գաղտնի տպել տալով, հրատարակ հանած է զայն Նորին Սրբազանութեան մահէն յետոյ: Զերմապէս կը յանձնարարեմք մեր ընթերցողներն ուշի ուշով կարդալու «Նոր-Դար»ի աշխատակից բազմահմուտ ԲԺ. Արամեանի գրողատեղիքը, եւ տեսնելու թէ Հայաստանեայց եկեղեցոյ պաշտօնեայ մը ինչպէս ձեռն ի գործ արկած է հիմնադրուած քանդելու կործանելու նոյն եկեղեցոյ քրիստոսաւանդ օրէնքներն, որոց անվթար պահպանութեանը ուստեալ պաշտօնեայն է:

Ծան. հմբ. «Մաղիկ»ի

Եթէ նա մի հայեացք դարձնէ մեր ժողովրդի ներկայ դրութեան վրայ, դիտէ թէ ինչպէս մեր կեանքի բոլոր ոլորտներու մէջ ժխտող ոգին կը յղատէ ամէն բան, որ մեզ համար անգնահատելի գանձ պիտի լինէին: Այն հաստատութիւնները, որոնք իրենց մէջ պահել ու պահպանել են հայկական կեանքի դոյութեան հիմունքը, այսօր այնքան խախտուել ու տկարացել են, որ նոցա մտաւորաւ անկման, կործանման մասին արդէն չարագուշակ մարգարէութիւններ սկսած են կատարուիլ: Կարելի՞ է արդեօք այս մասին անտարբեր մնալ եւ չվրդովիլ, երբ ասանց այդ մարգարէութեանց ալ մեր շուրջը կատարուող իրողութիւնները քակտուող, քայքայուող վիճակի ազդարար նշաններ են:

Նայինք մեր շուրջը, ասանց նախանձի ու անհաստատութեան դիտենք ողորմելի վիճակն այն հաստատութեանց, որոցմէ դուրս Հայ ժողովրդի գոյութիւնը մի կեղծիք է, մի պատրանք: — Երկուսի մէջ ալ օրինակարգ սահմանաց կատարեալ խանգարմունք եւ խրամատ, օրէնքի տեղ կը ներգործէ հաճոյք. հոգու, կենդանացուցիչ աղբիւրի տեղ ձեռք, ծէսը ի՞նչ հետեւանք կարող է ունենալ այս լի ձեւապաշտութիւնը, ասանց ներքինի, ասանց էականի, մինչդեռ այդ բանը՝ նիւթապաշտական հակումներու, մարմնապաշտութեան քարոզի եւ ամէն տեսակ մոլորութեանց նկատմամբ՝ մի դիւրին միջոց է ճշմարտութեան սահմանաց մէջ մտնելու եւ այն տեղէն գայթակղութեան լայնարձակ ճանապարհ բանալու համար:

Պատուին արդէն սկսած ենք վայելել: Ո՞վ կարող է անտեսութեան տալ, թէ ի՞նչպէս նախնիական բարոյական թեր ու դէմ քարոզները արագութեամբ տարածուելով ժողովրդի գրեթէ բոլոր դասակարգերու մէջ՝ արդէն մի մեծ խրամատ են բացել մեր բարոյական աշխարհայեցողութեան մէջ: Այդ քարոզները այնքան գերել ու կախար-

դել են մեր միտքը, մեր գիտակցութիւնը, որ քրիստոնէական ամուսնութեան մասին եկեղեցոյ հաստատած սահմանակարգը, ասանց սկսած եւրոպացի հրատարակիչներն՝ «Հին, փտած, այլ ես անտանելի խել մը օրէնք» սկսած է քարոզուիլ (Մշակ թիւ 88), իսկ այդ ալ խաղուր քարոզներու հաւանութիւնը՝ — յառաջադիմականութիւն...:

Ի հարկէ, այս արտառոց խօսքերը՝ աս ասուելն որպէս շուտաշուտ շարժակրատի դանդաջանք՝ մի ասանձին նշանակութիւն չեն կարող ունենալ խելացի մարդու համար, ազգի կենսական խնդրոց վերաբերմամբ այս ու այն եզրակացութիւնը հանելու համար: «Հին, փտած, այլ եւս անտանելի» եւ ասանց նման հազար ու մէկ նախատական անուններն ապացոյց չեն որ այդ օրէնքները արդարեւ հնացած, փտած ու այլ եւս անտանելի են: Ալ խաղուրի համար ամէն տեսակ օրէնք անտանելի է: Սակայն այդ խօսքերը հասարակական կարեւորութիւն սկսած են ստանալ այնու դի խիստ պաշարած են հասարակաց միտքը. մինչեւ անգամ դրական արձագանք, եթէ չստանք կատարեալ ճայնակցութիւն, սկսած են գտնել այն շրջանակի մէջ, որ ի վերուստ կոչուած է այդ օրէնքներն, որպէս գերագոյն պատգամներ, պահպանել անյեղլի, անվրթար, — անփոփոխ: Եթէ աղն անհամեմատի, իւ համեմատի:

Պատկերացնենք մեր խօսքերը կեանքի ու գրականութեան գծագրութեամբ, որպէս զի աւելի պարզութեամբ տեսնուի, թէ ինչպիսի յառաջադիմական գաղափարներ սկսած ենք արժարծել գերդաստանի եւ ամուսնական հաստատութեանց մասին, եւ թէ ո՞ր սկսած են հասնիլ մեր առաջադրութիւնները:

Վաղ՞ուց է արդեօք, որ մենք պարծանքով կը յիշէինք, թէ ի՞նչպէս եւրոպայի անուանի գիտնականները եւ ճանապարհորդները զարմացած մնացել են,

տեսնելով « Հայերի գերդաստանական կեանքի գերազանցութիւնը և այն վըսեմ ու բարոյական սկզբունքները, որոնց վրայ հիմնուած են գերդաստանական յարաբերութիւնները և մանաւանդ գերդաստանի մէջ կենց բռնած բնական գիրքը »: (Մշակ. 1873 թիւ 20):<sup>(1)</sup>

Վաղո՞ւց է արդեօք, որ այս մեր օրուայ «առաջադիմականութեան» օրգանը նշմարելով մի հեղինակաւոր եւրօպացու, Թիեզերահուզակ Մոլտկէի վերոյիշեալ մտօք տուած վկայութիւնը, կը գրէր թէ՛ «Մեր գերդաստանը, որի նշանակութիւնը մեր պատմական կեանքի մէջ դեռ որոշուած չէ, շատ ու շատ երեւելի եւրօպացի գիտնականների և ճանապարհորդների ուշադրութիւնն ու համակրութիւնն է գրաւել: Յաւալի է որ այժմ՝ ոմանք ինքնակոչ ու թերուս լրւատարեալներ, իրենց խոսի ու սկարխելով քննել ու գնահատել չկարողանալով այն կարծիքները գերդաստանական յարաբերութեանց մասին, որոնք տիրում են այժմ ուսուց հասարակութեան մի մասի մէջ և որոնք միանգամայն օտար ու տարբեր կեանքի արդիւնքներ են, ներմուծել են ձգտում մեր գերդաստանի մէջ: Եւ այդպէսով փորձ են փորձում խախտել մեր գերդաստանի հիմքերը, տապալել այն հաստատութիւնը որի շրջանի մէջ շարունակուում է մեր պատմական կեանքը, որ պահում է և զարգացնում է ազգային յատկութիւնները և մեր միութեան զգալունքը, որ իւր պատկառելի կերպարանքով և վեհ սկզբունքով յապուշ է ածում ամեն խելամուտ խուզարկողին» (Մշակ» 1873, թիւ 20):

Ոչ, վաղուց չէ քան տարի չկայ, որ «Մշակ» այդպիսի պայծառ գիտակցութեամբ կը ջատագովէր Հայոց գերդաստանի հիմքերը և պատկառելի կերպարանքը՝ ինքնակոչ քերուս լուսաւորեալների դէմ: Բայց համեմատաբար այդ կարծ ժամանակի մէջ ի՞նչպիսի արմատական փոփոխութիւն մտած է, ի հարկէ, բացասական ուղղութեամբ՝ ոչ միայն մեր գաղափարաց, այլ և գերդաստանական բարուց մէջ: Նախ որ այդ ժամանակաշրջանի մէջ հայկական գերդաստանի պատկառելի պատկերը այնքան եղծուած ու սյլանդակուած է, որ այլ եւս հետքն անգամ չնշմարուիր այն առաքինութեանց, որոնք նորա առանձնայատկութիւններն էին— Չղաստութիւն, Արդարութիւն և Աստուած-

պաշտութիւն» կոչուած առաքինութիւնները: Վերոյիշեալ ջատագովութիւններէն մի քանի տարի յետոյ մեզ ներկայեցին «Հայոց ընտանիքի պատկերը» («Մշակ», 1877 թիւ 20)<sup>(1)</sup>: Որքան էլ դիտմամբ թանձրացեալ համարինք այդ պատկերի վրայ ձգուած ստուերը, այսու ամենայնիւ անկարելի է ժխտել, որ արդարեւ այդ ժամանակ հայկական գերդաստանը տեսակ մը հիւժիշ ախտով բռնուել է և ընկած է վտանգի մէջ: Եթէ նոյն պահուն իսկ քաջութիւնն ու հեռատեսութիւնն ունենայինք իրաց վիճակը լրջութեամբ գննելու, իսկոյն կ'իմանայինք որ այդ ախտը տակաւին մահագոյժ չէ. ապաքինութիւնը և հնարաւոր է և դիւրին, միայն հարկաւոր էր փոքր ինչ արթնութիւն, փոքր ինչ եռանդ և փոքր ինչ գիտութիւն, իմաստութիւն: Այդ ախտը մի տեսակ երաշտութեան հետեանք էր: Բազմի շարաղէտ բերմամբ հայկական գերդաստանի ներքին կեանքը պահպանող և զուարթացնող կենդանարար ջրի կենդանի աղբիւրը խցուել էր: Այդ երաշտութիւնն ինքն ըստ ինքեան մի նպատաւօր պատճառ էր, որ փշած հովերու տարածած փոշին՝ ապականիչ ուտիճի նման՝ թանձր կեղևով նստէր հայկական գերդաստանի պատկերի վրայ և խանդարէր նորա բնական շնորհական ներդրութիւնը:

Աւելորդ է ըսելը որ «առաջադիմական» օրգանի երբեմն քամահրած լրւատարեալները օգտուելով այս հանգամանակէն, անարդէլ շարունակեցին իրենց փորձերը: Ոչ մի կողմէ արգելք չգտնելով, ընդհակառակը ամէն կողմէ յոյժ նպատաւօր պայմաններ և առատ հունձք, նոքա իրենց նպատակաւոր փորձերու մէջ այնքան յառաջ գնացին, որ այսօր կը ներկայացնեն մի խորխոր ոյժ և ունին հեղեղի սաստկութիւն: Նոքա կազմակերպած են մի գործադիր առաքելութիւն՝ բաւական մշակուած գըրականութեամբ և օրգանով: Այդ բանակը «անձնական օրինակով» կ'աշխատի ցոյց տալ այլազգ կեանքի արդիւնքների գերազանցութիւնը, յարմարութիւնները՝ մեր աւանդական կենաց արդիւնքների վրայ: Գրականութեան կատարած դերի նշանակութեան մասին խօսելը աւելորդ է. նորա դերը աւելի գործօն է և արդիւնաւոր, որտեղ բանակի անձնական օրինակը չէ կարող ազդել, — գրականութիւնը կը շահի: Նա կը պատրաստէ մտքերը՝ նպատակաւոր գրականութեան յատուկ նենգաւորութեամբ: Այդ պատրաստութեան մէջ ուսուցչի պաշտօնը կը կատարեն

այն վիպագիրք, որոց համար գիտութիւնը, իմաստութիւնը, հմտութիւնը, նա մանաւանդ զգաստութիւնը առաւապելներ են. նոցա համար մի բան յայտնի է՝ զգայականութիւնը, զգայական ցանկութեանց անբռնաբարելի իրաւունքը: Այլազգ և հեթանոսաբարոյ վիպագիրներու շաւղը բռնելով և առաջնորդուելով նոցա հայեցողութեամբ, մեր վիպագիրք եւս, իբր թէ իրականութեան պատկերահաններ, Օմուկվաքի «Որդու Հարսանիքից»<sup>(1)</sup> հասել են մինչեւ «Արամբին»:

Թէ այս ոյժը այսօր արագութեամբ սկսած է գերել հասարակաց միտքը առանց մի որ և իցէ դիմադրութեան, ապացոյցն այն է որ հայկական գերդաստանի օրինադրութեան հիմանց տկարութիւնը քարոզող եւ օտար կեանքի արդիւնքները, որպէս ժամանակի անհրաժեշտ պահանջ, որպէս անհատական ազատութեան գրաւական, մեր մէջ ևս ընդունուելու կարեւորութեան վրայ խտտեալս պնդողը այն հրապարակախօսն է, որ երբեմն խափու կը կշտամբէր զանոնք որք չէին գնահատեր հայկական գերդաստանի հիմանց գերազանցութիւնը:

Այդ քարոզներու մէջ յայտնի ձրգատուներու ջատագովութիւնը ոչ առակներով եւ ոչ ալ դիմակով է վարագորուած այլ ուղղակի յառաջ է բերուած հոլանի մերկութեամբ: Ով որ ուշադրութեամբ կարդացել է այդ ալմկայոյզ հրապարակախօսի «կնոջ դիրքը ամուսնութեան մէջ» առաջնորդողը («Մըշակ» 1890, թիւ 37—40), նա արդէն համոզուած պիտի լինի թէ, ի՞նչպէս երբեմն «ինքնակոչ ու թերուս» կոչուած լրւատարեալներու աղօս ու անկեր-

(1) «Յոյժ սիրեաց» ի իրաւանց այլանդակ բացատրութիւնը և աւելի այլանդակ կերպութեան պատկերացումը, իսկ ևս իսկ այն վարդապետութիւնը, որ քրիստոնէութեան Բ. դարու մէջ Ալեքսանդրացի Եպիփան գնոստիկ աղանդաւորը կը քարոզէր խօսքով ու գործով: «Կերագոյն օրէնքը՝ բնութեան օրէնքն է. Մարդըս իրաւունք ունի երջանիկ ու բարեբաստիկ լինելու եւ խրախճանանալու. հասարակութիւնն է միայն որ իրմէն կը խլէ այս իրաւունքը, ինչո՞ւ համար Աստուած զրկել է մեր մէջ ցանկութիւնը, եթէ մանք զրկուած ենք մեր ցանկութիւնը կատարելու իրաւունքէն: Ամուսնութիւնը մի պայմանաւոր բան է: Պարտքը կը բըզխի մարդու ընտրութիւնէն, իսկ գրգռը եւ իրաց բնազդումը՝ Աստուծոյ: Եպիփանը մեռաւ 47 տարեկան հասակի մէջ անառակ կենցաղէ, եւ թողուց մի գրուած «Յաղագս արգարութեան» վերնագրով: Այդ գրքի կեղծումը գնելով այն ըսկըզունքը թէ՛ Գերագոյն օրէնքը բնութեան օրէնքն է, նա կ'արժապէս այն հայեցողքը թէ, մեզքի պտուղները արդիւնք են մարդկային նոյն օրինաց օրէնք գրուած են բնութեան օրինաց և անհատի բնածին հակուսներու դէմ մտքաբեկու համար:

(1) Այդ թուականին «Մշակ» կը հրատարակուէր խորագրական ժողովի մը հսկողութեան տակ: 1876էն «Մշակ» սկսաւ հակառակը քարոզել, եւր Սրժբուներ. միւսնակ մնաց թերթին մէջ, Ծ. Խմբ. «Ծագիկ»:

(1) Միշտ թիւ 20. սա էլ նշանաւոր է: Ծ. Խմբ. «Նոր-Վարձի»:

պարան գաղափարները՝ այսօր մշակուած գրութիւն դառնալով, պարզորոշ ձեւակերպուած հանգանակ տուին հրատարակական դառնութեան թէ «Ամուսնութիւնը քաղաքացիական հաստատութիւն է», «Ապահարզանը ամուսնական հաստատութեան լրացուցիչ հաստատութիւնն է»։ «Ապահարզանը ամուսնական օրինականութեան գրաւականն է»։

Այս հանգանակը բռնած, նոքա լսել անգամ չեն կամենար այն սկզբունքներ որոց վրայ ամրացած է հայկական գերդաստանի հաստատութիւնը. նոցա մուշեղանդութիւնը, չհանդուրժելն այնպէս սաստիկ է եւ կատաղի, որ արդէն մահու դատաւճիտ են տուել այն հաստատութեանց, որոնք՝ աւելի խղճի ու աւողջ բանականութեան քան բնութեան անգոյ օրինաց թելադրութեան անսալով՝ չեն կարող մտածել անգամ թէ, ամուսնութիւնը մի սոսկ քաղաքացիական հաստատութիւն է և ո՛չ խորհուրդ, այն էլ մեծ խորհուրդ, որոնք չեն կարող համոզուիլ թէ քրիստոնէական ամուսնութիւնը, միակընուութիւնը, — որ այրը կնոջ հետ կը զուգէ ցմահ անբաժան միաւորութեան ուխտով եւ ո՛չ պայմանաւ կամ դաշնադրութեամբ, — կարելի է պահպանել արտաքոյ կրօնի հեղինակութեան և հաստատել փրկստփայական մակացութեանց հիմանց վրայ, որոնք վերջապէս չեն կարող ոչ մի կերպով ընթանել թէ կարիք կայ ապահարզանի մասին բերան բանալ, եթէ խօսքը եկեղեցական ամուսնութեան օրինակարգի մէջ նշմամարուած խանգարմանց բարձման մասին է։ «Այն հաստատութիւնները, կ'սպառնան կեղծ առաջադիմականք, որոնք ժամանակի պահանջման համեմատ վերանորոգուիլ չեն ուզում եւ չեն կարող, նրանք խալաւ պէտք է անհետանան աշխարհի երեսից, որպէս զի անհասք և անհատից բազկացած հաւաքական մարմինները, մարդկային հասարակութիւնը, ինչ ազգութեան և պատկանէին, նրանք ազատուին մեռնող հաստատութիւնների մեղքնող ազգեցութիւնից եւ նորից ընդունակ դառնան մասնակցելու ընդհանուր մարդկային առաջադիմութեան հոսանքին, ընդհանուր մարդկային քաղաքակրթութեան գործին»։ (Մշակ. 1888. թիւ 149)։

Այս սպառնալիքով այդ կեղծ յառաջդիմականք կը կնքեն իրենց դառնութիւնը. այս կնիքով նոքա ցոյց կուտան որ իրենց հաւատամքն ալ «խակ որք ասենն» ունի. այն ևս աւելի խորոխտ եւ աւելի սպառնալի, քան թէ նիկիոյ հանգանակի նզովքը։

Հեգնութիւնը մի կողմ դնենք. նայինք շեշտ շիտակ իրողութեան վրայ. Որքան էլ այս առաջադրութեանց և գայնա չընդունող հաստատութեանց դէմ գրուած սպառնալիքներու մէջ բացորոշ տեսնուի շոշորթ խնաստակներու դանդաշանքը, որքան էլ նոցա ինքնակոչ փաստաբանութիւնը՝ ի պաշտպանութիւն անհատի ազատական իրաւանց, հիմնուած տեսնենք աղխազուր տըրումաբանութեան վրայ, եւ վերջապէս ո՛րքան էլ «հնացած, քաղցած, մեռնող, մեռցնող հաստատութիւններին» մասին նոցա կարծիքը, ենթադրութիւնները բորբոքուած խելապատիկի բանդագուշանք համարինք, — այսու ամենայնիւ մենք իրաւունք չունինք այս բանի առջեւ փակել մեր աչքերը։ Սա մի բնորոշ իրողութիւն է այն կարգ մ'իրողութեանց որոնք հասարակական ծանրակշիւ նշանակութիւն ունին։ Մոլորութիւն է արդեօք սա թէ՛ ստուգութիւն, կեղծաւորութիւն է թէ՛ բարեացակամութիւն, — միեւնոյն է։ Երկու պարագայից մէջ ալ անկարելի է հաշիւը առկա թողուլ։

Եթէ հայ գերդաստանի մէջ պատըսպարուել և մարմնացել է քրիստոնէական վեհմ բարոյականի իդէալը ամուսնական կեանքի վերաբերմամբ, եթէ գիտենք գնահատել այդ հաստատութեան հիմանց և սահմանաց անսպառ զօրութիւնը, — ուրեմն պարտաւոր ենք արդարապէս զատուութեամբ քննել այս իրողութեան ստոյգ, ճշմարիտ եւ ոչ կարծեցեալ պատճառը։ Ի՞նչ է պատճառը որ նոմիստիկական թեր ու դէմ հայեացքները այդպիսի արագութեամբ տարածուելով հասարակաց գրեթէ բոլոր խաւերու մէջ, կը յանդգնին հրատարակօրէն քրիստոնէական գերդաստանի հիմունքը եղծել ու հերքել, եւ հասարակութիւնը, մանաւանդ մեր մտացի համարուած դասը մի սուսնձին յափշտակութեամբ եւ ուլաննաներով կը փառաբանէ այն մարդարէն որ քանի մի օր առաջ՝ իւր անկախ մտքի, անկախ մտածողութեանց, անկախ արդիւնքներու շարքը լրացուցած էր անպահարզանի հաւատամքով։

Ինչ որ ալ մտածենք մայիսեան ցոյցերու մասին, իրաւախոհութիւնը կը պահանջէ վկայել որ «Ի շակն արժանի է վարձոյ իւրոյ»։ Ընդունինք, ինչպէս եւ իրօք ալ է, որ ապահարզանի առաջադրութեանց ex cathedra հրատարակուելէն անմիջապէս յետոյ՝ ի մեծարանքս յառաջադիմականութեան պատգամախօսի կատարուած ցոյցերն՝ աւելի ամբողջի երամական անգիտակից հետեւողութեանն էին արդիւնք քան թէ խոհական գիտակցութեան թելադրութիւն։ Միայն չմոռանանք, որ այդ ցոյց

ցերուն մասնակից էին եւ այնպիսի անձինք, որոց ներկայութիւնը այդտեղ մի անբացատրելի գաղտնիք մնաց մեզ։ Ո՛վ, ո՛վ. բայց այդ անձինք եթէ կը կամենային իրենց կոչման խղճի մտօք եւ աննենգութեամբ ծառայել, մի բընական նողկանք պիտի տածէին դէպ ի այն չարաթոյն ուսուցիչ ու ուսումնարանը, որ կը վարդապետէ թէ՛ «Բաղաքական թերթը կրօն չունի», թէ՛ «Հայաստանեայց եկեղեցին մի ազանդ է», թէ՛ «Եկեղեցու օրինադրած կարգը ամուսնութեան մասին, առանց ապահարզանի, անբարոյականացուցիչ դրութիւնն է», թէ՛ «Ապահարզանը ամուսնութեան լրացուցիչ մասն է», թէ՛ «Ոչ միայն ազգութիւնը, այլ միեւնոյն րնցանիք կարող է բազկացած լինել այլ և այլ դառնութեանց պատկանող անդամներէ», և ասոնց նման հազար ու մէկ խորհրդակորոյս վարդապետութիւններ։ Նոքա գոնէ պիտի գիտնային թէ ի՞նչ է կրօնը, որտեղ էլ լինի, ի՞նչ է ապահարզանը՝ ինչ մտօք էլ որ քարոզուի եկեղեցի-ժողովրդի մէջ. մի խօսքով՝ պիտի հասկնային թէ յառաջագիմականութեան, լուսաւորութեան անունով ի՞նչպիսի չար ու ժանտ սերմեր են որ կը սերմանուին «ի մարմին»։ (Շարունակելի)

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն  
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ Ս. ԵՐՈՒՍԱ ՂԷՄԻ  
256

Այցելութիւնք Ամեհէ իւլիանի իսպիոյ, Փրեհերիկոսի Գուլիէլմոսի որդոյ քաղաւորին Բուսիոյ եւ Յովսէփայ Փրանկիսկոսի կայսեր Աւստրիոյ Երաւոսքիւն եւ սագնայ վասն այնորիկ. ջանք ի գիւտ կեկոյանի ջրոյ։ Երկուքիւնք անապարհաց. (1869)։

Նշանաւոր եղիցի ի տարեգիրո Ս. Երկրին ամն 1869, յորում ի իլանք վեհազնեայք և վեհապետք յարց ելեալ սրբազան Տեղեաց փառաւորեցին վրիշտակ ամենաթագաւորին Գրիստոսի, զքաղաքն սուրբ, զխանձարուրն քրիստոսական հաւատոց։ Առաջինն է ի նոսա կայսրն Աւստրիոյ Յովսէփ Փրանկիսկոս, երկրորդն՝ Փրետերիկոս Գուլիէլմոս, թագաժառանգ որդի Գուլիէլմոսի կայսեր Գերմանիոյ, երրորդն՝ Ամեհէ իլիւսան, երկրորդ որդի Վիկտորայ Էմմանուէլի թագաւորին Իտալիոյ։ Վերջինս այս որ յառաջեաց քան զնոսա ելանել յերուսաղէմ, առանց հանդիսական շքոյ եմուտ ի քաղաքն. եկն (յ30 Աւգոստոսի) և ի վանս մեր ընդ ումեմն առաջնորդի իբրու ոմն ի սոսկականաց, որոյ ընդ առաջ լեալ իմ. առանձինն ի գաւիթ եկե-

դեցեոյն, ըստ խնդրոյ նորին ետու ըզ-  
կարեւոր բացատրութիւնս շուրջ զվա-  
նացս և զեկեղեցւոյս: Սոյն սա յետ  
սակաւուց, որպէս յայտ է, կացուցաւ  
Թագաւոր Սպանիոյ, այլ տեսեալ զյե-  
զաւիտական և զանանդորր վիճակ Թա-  
գաւորութեան, կամաւ հրաժարեցաւ  
յօտար Թագէն: Երկրորդն, այն է Փը-  
րետերիկոս, զինի առաջնոյն եւ յերու-  
սաղէմ (23 Հոկտ.) որում արժանաւոր  
չքով ընդունելութիւն մատուցաւ ի  
կողմանէ տեղական իշխանութեան: Յի-  
շատակութեան արժանի համարի գա-  
լուստ սորին, այնու զի եղաւ հիմն նո-  
րոյ երեք հաստատութեան ի վերայ նը-  
շանաւոր գետնոյն այնորիկ, առ երի Ս.  
Յարութեան տաճարի, ուր կայր ի հը-  
նուն և առ Խաչակրօք եկեղեցի: Իսկ  
յաւուրս յետինս անցեալ ի ձեռս Արա-  
բացոց, արարեալ էին զայն կաշտուռն  
խաղախորդաց: Եւ զի ի նախատինս լի-  
նէր այն քրիստոնէութեան՝ վասն գար-  
չահատութեան զի մտադոյն էր յոյժ Ս.  
գերեզմանին, վասն այնորիկ առ կենօք  
Յովհաննու Պատրիարքի խնդիր մա-  
տուցեալ քրիստոնէից ի Գուռն արքու-  
նի, պահանջեալ էին զարձուցն անտի  
գործարանին կաշտործութեան, և ար-  
դարեւ ոչ միայն կատարէր խնդիր նո-  
ցա, այլ և հանաւ գետինն այն յաճուր-  
դըս, և ետ առաւելագոյնս գինս այնմ  
Յովհաննէս Պատրիարք. այլ ի յապաղել  
գալ պատասխանելոյ և որոշման արքու-  
նական Գրան, հանգեալ ի Տէր Պատ-  
րիարքն: Անցին ամք տասն, դայ Փը-  
րետերիկոսն Գուռիլմոս ի Կոստանդի-  
նուպոլիս յողջոյն Ինքնակալին Ապտ-իւլ  
Ազիզի, որոյ կամեցեալ առնել շնորհս  
կայսրորդւոյն, պարզեւէ նմա ըստ խնդ-  
րոյ նորին զի իշխալ տեղին հանդերձ սահ-  
մանօք: Եւ եղև ի պեղելն զհին աւե-  
րակս շինուածոյն, յայտնեցաւ հին ե-  
կեղեցին ամբողջապէս և այլ պէսպէս  
հնութիւնք Թաղեալ ի ներքոյ բըրձև  
աղբիւսաց, և դրամք հինք, որք առա-  
քեցան առ տէրութիւնն Բրուսիոյ: Իսկ  
իշխանն Թագաժառանգ յետ շրջելոյ ի  
Ս. Տեղիս և ի նշանաւոր վայրս, մեկ-  
նեցաւ ի չորրորդ աւուր:

Անցին աւուրք երկու, և ահա քա-  
ղաքն սուրբ զըրդէր ընդ լուր գա-  
լուստեան կայսեր Աւստրիոյ Յովսէփայ  
Փրանկիսկոսի: Փութացին ընդ առաջ  
նորա պատրիարքունք հանդերձ պաշտօ-  
նէիք իւրեանց, և յանդիման եղեն  
նմա ընդ վրանօք արտաքոյ քաղաքին:  
Ի մուտս անդ դրան Հայր Աբրահամու  
կոչեցեալ, կայսերական համազգես-  
տիւքն, որպէս և ամենայն երեւելի  
պաշտօնեայք իւր, գտաւ դէմ յանդի-  
ման Պատրիարքին Լատինաց, որ սպա-  
սէր նմա ընդունել կրօնական հանդիսիւ,

ըստ որում սովոր են առնել Թագաւո-  
րացն իշխանաց՝ որք պաշտենն զկրօն  
Հռովմէական եկեղեցւոյ, և նովիւ Թա-  
փօրիւ ած զնա ի Տաճար Ս. Յարու-  
թեան յերկրպագութիւն Ս. Շիրմին:  
Եւ անտի յարուցեալ չոգաւ ի նորակերտ  
վանս Աւստրիացոց, ուր էր նմա պատ-  
րաստեալ տեղի բնակութեան, զար-  
դարեալ ի կողմանէ արքունի Գրան: Ի  
սոյն պատճառ եկեալ էր ի մայրաքա-  
ղաքէն այր արքունական ածեալ ընդ  
իւր սպասս սեղանոյ և յարձաթոյ ի պէ-  
տըս կայսեր: Յերկրորդում աւուր ա-  
ռաւօտու յայց եւ քաղաքին. չոգաւ ի  
վանս Հայոց, ուր Եսայի Պատրիարք  
կանխաւ զգաստ լեալ եկաւորութեան  
նորին, պատրաստեալ մնայր յընդունե-  
լութիւն զնա եկեղեցական Թափօրիւ,  
և ինքն շուրջառ ոսկիթէլ զանձամբ  
արկեալ, և զխաչն մեծ զնշանաւորն ի  
ձեռին ունելով, սպասէր արտաքոյ դը-  
րան տաճարի: Անդ հասեալ կայսեր, և  
տեսեալ զեղանակ ընդունելութեան, ո-  
րում ակն ոչ ունէր, առ վայր մի շիթ-  
եալ յանձին մնայր արձանացեալ առա-  
ջի խաչին. և յակնարկել նմա խոստո-  
վանհօրն (aumonier) որ ընկերանայր  
նմա, համբուրեալ զխաչն՝ մտանէ ընդ  
Պատրիարքին ի Տաճար. երկրպագանէ  
առաջի սեղանոյ Ս. Գլխադրի: Եւ ան-  
տի յարուցեալ ելանէ ի պատրիարքա-  
րան, ի հոյակապ սրահն ընդունելու-  
թեան, որոյ ի ճակատու կանգնեալ կայր  
աթոռ ոսկէզօծ, ունելով յաջմէ և յա-  
հեկէ՛ զկեղեղանագիր պատկերս կայսեր  
և կայսրուհւոյն(1): Առ որս ակնարկ մի  
և եթ տուեալ կայսեր, եկաց յոտին  
վայրկեանս ինչ, խօսակից լինելով ընդ  
Պատրիարքին միջոցաւ Պարոն Յակոբ  
Փասկալայ Թարգմանի եւ քարտուղարի  
հիւպատոսարանին Աւստրիոյ: Զուար-  
ճացաւ կայսրն ընդ ընդունելութիւնն,  
զոր արար նմա Պատրիարքն Հայոց,  
որպէս յայտնեաց իսկ Պարոն Յակոբայ  
առաջի պաշտօնէից իւրոց: Աւուրս չորս  
եկաց ի քաղաքին, և այն աւուրք ու-  
րախութեան էին բովանդակ բնակչաց,  
որք տօնեցին զգալուստ նորա ընդհա-  
նուր ճրագավառութեամբ և ազգի ազ-  
գի հրախաղութեամբք: Ի մեկնել իւր  
յառաջում աւուր նոյնմերի, եթող  
փլորինս 10 000 ի բաժանել աղքատաց  
և այնոցիկ որք աղբրսանաց գրովք ըզ-  
գթութիւն նորա հայցեալ էին: Բաց  
յայնմանէ, բաղումնպատաս օգնութեան  
և նուէրս աղբի ազգի պարգևեաց ե-  
կեղեցեաց և վանօրէից Փրանկիսկեանց:

(1) Զկրկն պատկերս զայսոսիկ առաքեալ էր  
նոյն ինքն կայսրն միով ամաւ յառաջագոյն միջ-  
նորգութեամբ հիւպատին իւրոյ, որոյ ի շնոր-  
հակալութիւն գրեաց Պատրիարքն Թուրքի, զ-  
որոյ զպատճենն զանց առնումք ի մէջ բերել:

Բաշխեաց և սիկս Թագաւորական կա-  
ռաւարչին Երուսաղէմի և սյրոց աւա-  
զանեաց եւ զինուորական պաշտօնէից:  
Շնորհեաց և պարոն Յակոբայ(1) սիկզ  
գ. կարգի սաստեական Փրանկիսկոսի  
Յովսէփայ, և ի վարձ հաւատարիմ ծա-  
ռայութեան նորին կացոյց զնա փոխ-  
հիւպատոս ի Յոպպէ: Իսկ Եսայեայ  
Պատրիարքի ընծայեաց խաչ ընդելուզ-  
եալ ակամբք պատուականօք:

Թէպէտ և քաղաքն սուրբ փառաւո-  
րէր ընդ գալուստ վեհափոստ իշխա-  
նացս, այլ ի սիրտս երկրագործաց և  
ժողովրդոց իսկ տակաւ երթեալ և ա-  
ճէր տաղնապ ընդ ստերլութիւն ամ-  
պոց. քանզի ցայն վայր, իմա մինչեւ  
ցսկիզբն աւուրց նոյնմերի, և ոչ չիթ  
մի անձրեւոյ անկեալ էր յերկնից յաշ-  
խարհին Երուսաղէմացոց. վասն որոյ և  
ռամկամիտ ամբոխ ժողովրդեան, որ  
գիտէ յայսօրինակ դէպս գուշակու-  
թիւնս առնել և մեկնութիւնս ստեղ-  
ծանել, ասեն՝ եթէ մուտ Թագաւորի ի  
քաղաքն կապեալ ունիցի զերկինս: Քոն-  
զի անօրինակ համարին զայնչափ յա-  
մենալ անձրեւաբեր ամպոց. ժողովուր-  
դըն սկսաւ նեղիլ և տաղնապիլ. քան-  
զի, բաց ի վանուց Ս. Յակոբայ՝ սպա-  
ռեցան ամենայն համբարք ջրոց ի քա-  
ղաքին, և տիկ մի ջուր աղբերն Աեյո-  
վամայ բարձրացաւ ի գլին երկոց գահե-  
կանաց, և այն ոչ յարբուցն գայր վա-  
սըն դառնութեանն:

Ի վերայ այց չարեաց յաւել ընուլ  
երկիւղիւ զսիրտս բնակչաց և յանկար-  
ծակի երեւումն մարախաց, որ պատեալ  
ունէին զերկինս հօծ և խիտ բաղմու-  
թեամբ (27 դեկտ.), որք թէպիտ և ի  
նմին երեկոյի հետախաղաց ի բաց պոր-  
զեալ ցրուեցան, այլ երկիւղ նոցին,  
մանտուանդ անձրեւաց պակասութիւն,  
բարձրացոյց զգինս արմտեաց: Է՛ ու-  
րեք զի ցօղէր երկին, այլ այն ոչ ի պէտս  
գայր երկրի: Անագանէր և ձմեռն,  
գարուն մշտնջեան թուէր Թագաւորել  
յերկրի. ծաղկեալ փթթին նշենիք ի  
մուտս նորոյ տարւոյ (1870). զարդա-  
րին ծառք և թուիք կանխաժամ: Այս-  
պէս մինչև ց26 յունուարի տեւաց ե-  
ղանակն գառնանագեղ: Ապա ի շնչել  
արեւմտեան հողմոց՝ մթագնին օդք, ո-  
րոտան երկինք, և սկսանի կարկտեւ  
սաստկապէս և անձրեւել բռնաչունչ  
հողմով, այլ ոչ տեւեաց ընդ երկար.  
սկիզբն առ կրկին երաշտանալ երկիր,  
կրկնեցին Հրեայք զաղօթս իւրեանց ընդ  
Մահմետականաց: Զնոյն արար և ուխտ

(1) Պարոն Յակոբ Փասկալ կղբօրորդի է Պա-  
րոն Մուրաթայ Զմիւռնացոյ, որ նշանաւոր ե-  
ղև գործաւք իւրովք յաւուրս պատրիարքու-  
թեան Թեոգօրոսի, եւ եղև յետոյ գործակաւար  
ի կազմանէ երկուց տէրութեանց Երուսղիոյ:

եկեղեցւոյն Հայոց, առուրս հինգ յազօթս եկաց վասն անձրեւոյ. այլ երկին խտացեալ թուէր որպէս զառուրցն Եղիայի. քանզի ամպ էր առանց անձրեւելոյ. արտորայք, որ այն ինչ սկսեալ էին արձակել ծիւղ, խամրեցան. ցամաքեցան սերմանիք. թանկեաց և ալիւրըն. մի չափ ցորենոյ բարձրացաւ ց28 դահեկան: Եւ զի երկիւղ մեծ տիրէր ընդհանուր սովոյ, ոչ միայն հացի, այլ և ջրոյ, վասն այնորիկ խորհուրդ արարեալ առաքանւոյն ընդ բոլորսն, գրեցին յարքունի Դուռն, և եկն հրաման թերեւ ջուր ի քաղաքն: Եւ չոգան արք հմուտք ի շննութիւն աղբերականց առ ի անեւ խառնել զոր դիւրահնարն դատեցին, յաւազանն Սողոմոնի, և անտի ընդ հին ջրմուղս թագաւորականս անցեալ անեւ թափել ի քաղաքն:

Մինչդեռ դանդաղէին ի ձեռնարկութիւնն, և ահա ողորմութիւնն աստուածային, որ գնացուցանէ գետս ի վիմէ, և ջուր յապառած վիմէ, կանխեաց քան զնոսա ի տնօրինութեան իւրում, խորհեցաւ զաղքատն որ զյետին լումայն իւր ծախեալ էր ի հոգալ ըզջուր. երայ զտահանս երկինց (20 փետր), և տեղաց անձրեւ կարկտախառն և որոտածայն իբրու քառորդ մի ժամու, և յետ այնորիկ շարունակեաց անձրեւն սովորական. լիացան ամենայն բնակիչք. լցան համբարք ջուրոց, և ազատեցաւ քաղաքն առ ժամն ի սպառնալեաց երաշտութեան:

Յամարանի տարւոյն այնորիկ երեւցաւ յերուսաղէմ այր կրօնաւոր ի սահմանաց անտի Եւրպիոյ. ուսեալ, որպէս թուէր, ի ջրաբաշխական գիտութեան, և պարծէր գիտել ճանաչել զերակս երկրի, ուր ջուրք ամբարեալ կայցեն: Ետ պեղել ի տեղիս տեղիս արտաքոյ և ի ներքս ի քաղաքին, այլ ոչ ուսուեք կարաց նա բխեցուցանել ջուր կենդանի, ոչ ի ձորին Գէթսէմանոյ և ոչ այլ ուրեք. բայց միայն մօտ ձմերանցին մեծի, ուր է նորաչն վանքն մայրապետաց Գաղղիացոց. անդ եւ ջուր դառնահամ, ոչ ի կոյս երկրէ. այլ էր ճանապարհ ստորերկրեայ ջրանցից աղբերն Սելավանոյ ըստ ամենայն հաւանութեան, զի զնորա ճաշակ և զգոյն բերէր, և չեղև նա իմիք ի պիտանութիւն:

Յառաջ քան զայս յամի 1865, յառուրս Իզգէթ փաշայի նորոգեցան կազմեցան աւազանքն Սողոմոնեան զայս երկրորդ նուագ, այր վասն եղեն ծախք 675000 դահեկանաց, ի բնակչաց ժողովեալ հանդանակութեամբ: Այլ քան զայն կարեւորագոյն էր հարթումն նորոյ ճանապարհին Յոպպէի մինչև ցերուսաղէմ, որ եղև յամի 1867: Ոչ երկարեաց գործն, և ահա հորդեցան

հարթեցան դժուարակոխ վայրք և բլուրք վիմուտք և լեռնամէջք, ընդ որ դժուարանային ընթանալ գրաստուցն ամբալք, և ի քայլս լարծուտս բազում անդամ զկեանս իսկ ուղեւորաց վտանգէին: Յետ այնորիկ սկսան և կառք լծեալք ի ձիոց ծառայել ի փոխադրութիւն մարդկան, այլ ի պատճառս զառիվեր տեղեաց որք մնացին անհարդ, խափանեցան երթեւկութիւնք նոցա:

**Ա Ռ Ո Գ Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն Մ Ը**

ՕՐԻՈՐԳ ՓԱՓՈՒԿ(1)

Սովրէ ու սովրէ. ուսմունքն ինչքնեմ, Բզգեստ չէ հազնիմ, անուշ չէ ուտեմ: Ինչ մը դաղղիբրէն և դաշնակ ու պար... Լա՛ւ. ինչուս պէտք է այդ խորունկ գըրաբառ:

Քարտէզի վրայ աշխարհ մը տեսնել, Քսակը պարապ՝ տոկոսներ հաշուել, Կէս կուշտ կէս նօթի, դիտնալ թէ ուստի կուգայ լաւ ցորեան, կարագ կամ դինի, Չափել կեղծ ձեւով մօտա ըզգետներ, Երբ սրնտուկինս կըռնակս եմ առեր: Ես աշխարհի մէջ քանի՞ օր ունիմ, Եւ ինչ հարկ է որ այչափ չարչարուիմ:

Այսպէս կը խոսէր Օրիորդ Փափուկ Եւ դըպրոցն իրեն բանտ կուգար անձուկ: Նա գնաց եկաւ, եւ ոչ ինչ ուսաւ, Դաշնակն իսկ իրեն շատ դժուար եկաւ. Մերթ գիրքը բացաւ, աչքերը գոցեց, Դասարանին մէջ յաճախ մըրբաց: Միշտ խաղաց, խնդաց, կերաւ ու խըմեց, Եւ յետոյ աղւոր քունիկ մը քաշեց:

«Տանձ էր նէ հասաւ, խնձոր՝ կարմըրեցաւ.»

Մեր Փափուկին ալ տարիքը լեցաւ: Վերջի քննութեանց՝ դարձեալ բացակայ. Մըրցանակաց օր՝ սուտ հիւանդ կըլլայ: Ինչ ցաւ ծնողաց. վա՛յ չար անպիտան... Յետոյ զըղջաց շատ, բայց օրերն անցան:

Այդ Օրիորդը ո՞ր վարժարանն էր... Այս միայն գիտեմ որ Մեղպուրեան շէր. Մեր երիցագոյնք՝ ահա կը տեսնանք Փառքով պըսակեալ՝ իրենց տան պարծանք:

Ապրիք... շատ ապրիք... ձեզի պէս ես ալ երկու տարիէն կուզեմ... նայինք... ո՛չ իրեք տարիէն անարտող մ'ըլլալ: Յիմար կուսանաց մին էր այդ Փափուկ. Ոչ մի Մեղպուրեան չէ այդչափ փախուկ:

(1) Այս գուարձալի քերթումը Մեղպուրեան վարժարանի կրտսեր սանուհիներէն մին արտասանած է մրցանակաց հանդիսի մը առթիւ:

**ԳՐԱԳՈՂԱԿԱՆ ԽՆԴԻՐ**

«Մաղիկ» շաբաթաթերթիդ նոր շըրջանի առաջին թուոյն մէջ Իզմիրէն Պ. Սաւալանեանի ժամանակագրական Պատմութիւն Ս. Երուսաղէմի խորագրով յօդուածը՝ լի կրիւք ու լուսանօք՝ կարդացի, որոյ պատասխանել աւելորդ աշխատանք պիտի լինէր, եթէ հակառակ հրապարակախօսութեան օրինաց՝ զրպարտութեամբ ու նախատանօք հանդերձ ակն յայտնի ճշմարտութիւնը խեղաթիւրելու անխղճմտութիւնը ըրած չլինէր. վասն որոյ ի պատիւ և ի պաշտպանութիւն ճշմարտութեան հետեւալ մի քանի տողերը կը նուիրեմ, խնդրելով որ հիւրասիրէք պատուական Շաբաթաթերթիդ մէջ:

Ս. Պ. Սաւալանեան առանց տեսնելու լրած լինելով որ Գեր. Աստուածատուր Եպիսկոպոսի նորատիպ Ս. Երուսաղէմի ժամանակագրական Պատմութեան մէջ Յիւլիոսի կայսրինալին գաղտնիքն նամակը կայ, երեխայական սնապարծութեամբ այդ նամակին գիւտի պատմութիւնը կ'ընէ, որ է, ըստ ցուցման Եսայի վարդապետի, իմանալով՝ որ այս նիշ խցիկին մէջ թղթերով լի մի քանի կողովներ կան... բոպէ չկորսնցնելով անմիջապէս կը հասնի, վերջին մնացած կողովը ձեռք կ'անցնէ և ձղի ի վեր պաշտով կը պրպտէ: Ինչ բազմաքիրտն և մեծամաստակ գիւտ. կողովէն դուրս կը կորզէ կը հանէ Յիւլիոսի նամակը, որպէս Գոլոմպոս՝ նոր—Աշխարհն՝ յանձանօթութեանէ. (եթէ միաբանութիւնը այդպիսի հնութեանց յարգ չընծայէր ինչո՞ւ կը պահէր հարիւր տարիէն աւելի, և մանաւանդ Եսայի վարդապետը որ Յովհաննէս Պատրիարքի կենդանութեան ատեն ձեռագիրները կը ժողովէր, ինչո՞ւ 1863ին թոյլ կը տար որ կողովները լեցնող թղթերը փուլը տաքցընելու ծառայեն). ի վարձ այս անվճատ և տաժանելի աշխատութեան՝ ո՛չ մի պատմագրի իրաւունք չտար ոյդ գիւտին օգտուելու, կամ իւր բառերով, այնու լիայլ մի աւելցնելու իւր անքիրտըն աշխատութեան:

Որովհետև յիշեալ նամակը Գեր. Աստուածատուր Եպիսկոպոսի աշխատասիրութեան մէջ ևս կայ, այնպէս կ'ենթադրէ Պ. Սաւալանեանը, որ իւր Պատմութիւնը Աստուածատուր Եպիսկոպոսի ձեռքն անցնելով՝ ամբողջն անտի քաղած, կամ սլարգապէս օրինակած է և այսպէս օտարի պարտիզէն գողցած ծաղիկներով իւր ճակատին պըսակ հիւսած է, ուստի արդար քայրուստով ամենայն դօրութեան կը բողբէ ընդհանուր ազգին, ներկայ և ապագայ սերունդներուն Գեր. Եպիսկոպոսի

գրագրութեան դէմ, կը բողոքէ ու Միաբանութեան դէմ, որ իւր դառն քրտանց պտուղը եպիսկոպոսի ձեռքը մատնած է:

Ամբողջ Միաբանութիւնը, որ իրազեկ է ճշմարտութեան, կը ժպտի իւր դէմ բողոքողին վրայ. իսկ մենք յանդերուի ինչ սրտի և մտաց բողոքարկուին կը յաւելուածք թէ պարզ ու անխարդախ ճշմարտութիւնը հետեւեալն է: Երբ Պ. Սաւալանեանը վերջնապէս մեկնեցաւ Երուսաղէմէն՝ տանելով իրեն հետ իւր աշխատասիրութիւնը, (վիճաբանութեան դուռ չբանալու համար չենք հարցնել իրմէ, թէ ինքը այդ պատմութեան ի՞նչ պայմանաւ և խոստմամբ ձեռնարկած է, որ հանգուցեալ Եսայի Պատրիարքը ամէն աղբիւրներ լի վստահութեամբ բացեր է իրեն, մանուշակ և այնպիսի աղբիւրներ որ շատ անգամ Միաբանութեանէն իսկ ծածկուած են և ամեն նիւթական և բարոյական դիւրութիւններ տուած. չեմք հարցնել թէ, իրաւունք ունէ՞ր իրեն հետ տանալու, քանի որ Երուսաղէմի համար ու Երուսաղէմի միջոցներով գրուած էր), Գեր. Աստուածատուր եպիսկոպոսը խորհուրդ կը յղանար Ժամանակագրական Պատմութեան մի խմբագրութեան ու ձեռն ի գործ կ'արկունէ 1874ին և ի կատար կը հասուցանէ 1880ին: Եսայի հոգեւոյն Պատրիարքը որ ամէն դիւրութիւններ ընձեռած էր Պ. Սաւալանեանին, գուցէ վշտացած նորա վարմանց վրայ, չզլանար նոյն դիւրութիւնները և Աստուածատուր եպիսկոպոսին՝ տալով նմա Պատրիարքական դիւանէն ամէն թուղթ, յիշատակարաններ և պատմական այլ նիւթեր: Ընթերցողը կրնայ դատել թէ միեւնոյն մօր կրկին ծննդոց մէջ ի՞նչ համանմանութիւններ կրնան լինիլ:

Պ. Սաւալանեանը մինչեւ 1886 իւր պատմութեան մասին զանազան տեղեր ապարդիւն դիմումներէն յուսարեկ ու թերեւս ի խղճէ հարեալ՝ առանձինն գըրութեամբ մի առ տեղապահն կը զրկէ Պատմութիւնը յերուսաղէմ: Նամակին տողերը ընթերցողի ուշադրութեան կը յանձնեմք. «Որովհետեւ Ս. Աթոռոյդ մէջ հետաքրքրուեցայ այս օրինակ ծանրը աշխատութեան ձեռնարկելու և ո՛չ դոյզն օգնեցին ինձ տեղային դիւրութիւնք և ինչ ինչ յիշատակագիրք, վասն որոյ յիրաւունս համարիմ թողուլ զայն ի հաճոյս և ի տնօրէնութիւն պատկառելի խորհրդոյդ»: Երբ պատմութիւնը Երուսաղէմ հասաւ, յատենի Տընօրէն Ժողովոյ ինձ յանձնուեցաւ Աթոռոյ գրատունը դնելու համար. յանուն ճշմարտութեան ի լուր աշխարհի կը հուշակեմ որ Աստուածատուր Ե-

պիսկոպոսը ո՛չ միանգամ, ո՛չ մի րոպէ տեսած չ'է Պ. Սաւալանեանի Պատմութիւնը և ո՛չ խօսքն ըրած է. և իւր Պատմութեան տպագրութեան ատեն, որոյ սրբագրութեանը մասնակցած եմ, քանիցս թախանձագին խնդրած է, որ չըլլայ թէ Սաւալանեանի Պատմութեանէն բառ մի աւելցնեմ:

Բ. Պ. Սաւալանեանը կ'ըսէ, որ թէ և միաբանութիւնը վարձը վճարելով գընած է իւր Պատմութիւնը, բայց տէրը չէ ձեռագիր մատենին... այլ պարտաւոր է տպել զայն յանուն հեղինակին, և ո՛չ ըստ հաճոյս քաղուած ընել ու համառօտելով տպել իւր անուաներքեւ:

Ամէն մարդ կը հասկանայ, թէ ի՞նչ կը նշանակէ բանի մը վարձը տալ անելը. ուստի աւելորդ կը համարիմ որ և է բացատրութիւն տալ. նշանակութիւն չունի այս տեղ վարձուց շատութիւնը կամ քիչութիւնը, բաւական է որ երկուստեք եղած համաձայնութեամբ որոշուած է: Միաբանութիւնը Պ. Սաւալանեանի աշխատութիւնը վարձով առնելու պարտաւոր չլինելով և պէտք չունենալով հանդերձ, ի յարգանս իւր ծերութեան և գրաւոր խնդրանայ այդ զոհողութիւնը ըրած է մի այնպիսի անձուկ վիճակի մէջ, որ շատ թանգ կ'արժէր Աթոռոյն համար. բայց Պ. Սաւալանեանի ըրածը անխարդախութիւն և հաւատարմութիւնն է, որ իւր վաճառած Պատմութեան մէկ օրինակը քովը կը պահէ, որոյ վերջին երեք գլուխները իբրեւ նմոյշ դիտաւորութիւն ունի եղեր հրատարակել Շաբաթաթերթիդ մէջ:

Միաբանութիւնը Պ. Սաւալանեանի Պատմութիւնը անպատճառ տպելու համար յանձնարարութիւն կամ խոստում ըրած չէ, և եթէ միջոցները ներեն տպագրութեան՝ ապահով թող լինի, որ իրեն չզլանար հեղինակի անունը. իսկ եթէ քաղուածներ կամ համառօտութիւններ ընելու պէտք ունենայ, հարկ չկայ իրեն Պատմութեան դիմել, քանի որ նորա աղբիւրները կան Ս. Աթոռոյ մէջ և շատ աշխատասիրողներու բաւականութիւն կարող են տալ:

Պ. Սաւալանեան այս անտեղի պահանջումը կ'ընէ անշուշտ այն պատճառաւ, որ Գեր. Աստուածատուր եպիսկոպոսի աշխատասիրութիւնը տպուած է. բայց եթէ փոքր ինչ ձանձրութիւն յանձն առնելով կարգայ նորա ընծայականը, յուսով եմք, հրապարակաւ այդ պարտաւորութիւնը Միաբանութեան ուսին վրայէն վերցնելու աղանութիւնը կ'ունենայ:

Անպէտ կը համարիմ պատասխանել Պ. Սաւալանեանի այն համեմատու-

թեան որով իւր Պատմութեան կարեւորութիւնը ի կշիռ կը դնէ «Աստուածաշունչի Համարաբառին» հետ, քանի որ ամէն ողջամիտ ընթերցող կրնայ վճռել թէ ի՞նչ համեմատութիւն կրնայ ըլլալ Ս. Գրոց վերաբերեալ ուսումնասիրութեան մի ու պարզ Պատմութեան մի մէջ. եթէ մի օր միաբանութիւնը, ինչպէս մտադիր է, Աստուածաշունչ տպէ, գուցէ այն ատեն Պ. Սաւալանեանը ելնէ ըսէ, թէ իւր աշխատութիւնը շատ մեծ կարեւորութիւն ունի քան Աստուածաշունչը:

Գ. Պ. Սաւալանեան հակառակ իւր անխառնաէր բարուց չըզեր բարեպատեհ առիթը կորսնցնել ի հրապարակ հանելու իւր մէկ զոհողութիւնը, զոր ըրած է ի պատիւ անուան Միաբանական Ուխտին, այն է 15 տարի մնալով Ս. Յակոբայ վանուց մէջ դասատուութեան և տպարանի տեսչութեան պաշտօնիւ (չգիտեմք քանի՞ տարի դասատուութիւն և քանի՞ տարի տպարանի տեսչութիւն ըրած է, որպէս զի մնացեալ տարիներուն համար հարցնէինք թէ՛ ի՞նչ պաշտօնի համար ամսական կ'առնէր) 45էն աւելի գրքեր հրատարակած է:

Պ. Սաւալանեան իւր նախորդ յօդուածին մէջ (Մաղիկ թիւ 45), ուր կը խօսի գլխաւորաբար վանուցս Մատենադարանի ձեռագրոց պատրաստած ցուցակին վրայ, առաւել անկեղծութիւն ցոյց կը տայ քան ներկայ յօդուածին մէջ. անդ պարզապէս կը խոստովանի, որ ձեռագրոց ցուցակը պատրաստել Եսայի Պատրիարքին հրամանն էր, իսկ այս տեղ 45էն աւելի գրքերը ինքը հրատարակած է և իւր կողմանէ ի պատիւ անուան Միաբանական Ուխտին զոհողութիւններ չընէին և Պատուելիին պաշտօնն ալ տպարանին մէջ սրբագրութիւն չլինէր, արդեօք անպատճառ այդ զոհողութիւնը պիտի ընէ՞ր:

Այլ խնդիր է թէ, Պ. Սաւալանեանը մեծ պարծանօք հոչակած այդ զոհողութիւնը ի՞նչ աստիճանի հաւատարմութեամբ կատարած է, քանի որ գիտենք թէ ձեռագրոց պատրաստեալ ցուցակի օրինակները օտարներու ձեռքն է այսօր և նոքա՝ ի շնորհս Պատուելիին՝ մեզմէ շատերէն լաւագոյնս գիտեն գրոց համարները և նոցա պարունակութիւնները: Գրագրութիւն տիրողը կարծեմ շատ աղէկ կը յարմարի Պ. Սաւալանեանին քան որ և է մէկուն, բայց կը խնայեմք իւր ծերութեան և բազմամեայ վստակաւոր լինելու համբաւին:

Միայն չեմ կարող ծածկել այն խորին վիշտը, զոր ի վաղուց զգացած եմ Ազգ. մեծամեծ կեղերոններու ճակատագրին վրայ: Որովհետեւ շատ անգամ հաւատարիմ կարծուած անհատներ պաշտօնի կը կոչուին այդպիսի կեղերոններէ, ուր երկար տարիներ լիաթողակ ամսական կ'առնեն, ամէն դիւրութիւններ ու դիւրակեցութիւններ կը վայելեն, կը հմտանան նորա ներքին և արտաքին կեանքին և այդ հմտութիւնը փոխանակ ի բարին և յօգտակարն ի գործ դնելու, յետ ժամանակաց, երբ պաշտօնէ արձակուին, ի չարն և ի վնաս նոյն կեղերոնին գործ կը դնեն: Մոռցուած չէ Հովեանի մը դատապարտելի վարմունքը էջմիածնայ դէմ և այսօր նոյնը կը փորձուի Երուսաղէմի Աթոռոյն դէմ տասն և հինգ տարիներ նորա բարեքը վայելող Պ. Սաւալանեանի կողմէն:

Այս է մեր առաջին ու վերջին պատասխանը Պ. Սաւալանեանի Կրագիսական տետրեան աւթիւ. յետ այսու չունիմք ըսելիք՝ ընթերցող հասարակութեան ներողամտութեան հետ չարաչար վարուած չլինելու համար:

11 Նոյ. 1891.  
Երուսաղէս Ս. Ե. Ս. ԽԱՊԱՅԵԱՆՅ

Յ. Գ. Պատուական «Մաղիկ»իդ առաջին շրջանի 39 համարին մէջ Նարհիմ ստորագրութեամբ բանասէր ոք, ի դիմաց հայ բանասիրաց կը խնդրէր Ս. Յակոբայ Միաբանութենէն ծաւացի չորս Հայերու նուիրած հնամի, այլ մաքուր, ընթերցանութեան վրայ տեղեկութիւններ, զոր հնասէրք ոմանք 5—600 օսմ. ոսկի արժեցուցած են:

Ահաւասիկ այդ խնդրուած տեղեկութիւնը. ծաւացի չորս Հայերը ակնարկուած թանկագին նուէրը ըրած չեն. այլ Բաթալիացի տիկին Հուսիսիմէ Բ. Յովհաննէսեան՝ ձեռամբ Գ. Ե. Գասպարեանի մէկ նոր կտակարան կը նուիրէ Ս. Աթոռոյ, տպեալ Յամսթէօտամուր յամի Փրիզին 1668, փետ. 10: Յիշեալ բարեպաշտուհի տիկնոջ՝ այս նուէրին համար օրհնութեան կոնդակ զրկուած է ընդ համարաւ 1823:

Եթէ էզէլ կամ պակաս ինչ նշմարէ Պ. Նարհիմ այս տեղեկութեան մէջ, յանցանքը մերը չէ, այլ Երուսաղէմէն դարձող ուխտաւորաց ու անգոյ նուէրը 5—600 Օսմ. ոսկուց գնահատող բանասիրաց և հնասիրաց: Նոյն

Ամէն մայր պարահանդիսի մէջ ծպտեալ նօտար մ'է:  
— Կնոջ մը բերնին անվայել մի բանն ալ է հեզնական ծիծաղը:

ՈՐՈՒՒ ՄՏԲԷՆ Կ'ԱՆՅՆԵՐ

Ա.

Տարօրինակ գաղափար մը թեւ առաւ մտքիս մէջ օր մը եւ երկրորդ օրը իրագործեցի:

Գիշերին մինչեւ ժամը վեց անխնայ փիճարանութիւններ լսելէ գլուխս ուռած, դարձայ տուն և մտայ անկողին, և ուղեղիս այդ իրիւրուան փիճակն էր որ տուաւ ծնունդ այդ նորօրինակ գաղափարի. «Այցելութիւն մը քամ Պառնաս լեռան»:

Այս մտածութիւնը շահագրգռեց զիս շատ եւ գնալով կ'աճէր կը տնքանար մտքիս մէջ այդպիսի փափաքի մը իրագործումը: Ինչ որ է, հիմա քննամբ ըսի, բայց անիծեալ գիշերպահին գաւազանին չոր հարուածները գլխուս մէջ կը գարնէին կարծես և այրող աչերէս կը փախչէր կ'երթար երկջոտ Մօրիէոս, ծերերու թշնամին և իմ սրտակից մըտերիմն. այս անհանգստութեամբ վերջապէս ողջունեցիք Սալէպճին և ըրաւ ինձ հետ գլխ անգամ մը կենացը մէջ քսան փարայի առեւտուր: Մի քիչ կաղաւթուած եկայ ինկայ անկողին, և այս անգամ Մօրիէոս իւր համայն բանակովն հասեր սիրեր էր ինձ: Արթնցայ մօրըս յանդիմանական խօսքերու ձայնէն, բացի աչերս, բացի ժամացոյցս, աչացս համար դեռ կանուխ էր ելնելու, ժամացուցիս համար ուշ, կէս օր էր ճիշդ: Ելայ, ճաշեցի, պատրաստուեցայ և ինկայ ճամբայ դէպ ի Պառնաս, տեսնելու համար աչօք թէ ո՞վ կայ մեր Հայոցմէ Ապողոնի երկիրը, ինն քոյրերու բնակավայրը: Տարօրինակ գաղափար, Աստուած ողորմի երանելեաց: Մեղացս շատութիւնն է որ զիս կ'ենթարկէ այս օրինակ ապաշխարանաց, զի երթալով չէր հասներ այդ ճամբան. տեղ մը՝ ուր ոչ չղգենաւ, ոչ չղգեկառք, ոչ ձի, ոչ կառք և ոչ իսկ նորագիւտ թռչնածև օդապարիկները կրնան երթալ, որպէս զի խառնիճաղանձ խուժան մը յորդելով հող՝ չանհանգստեն մուսայից պաշտպանեալ մահկանացու — անմահներն: Գալէ... քալէ... քալէ... ու անցիր լեռներ ու ձորեր, դաշտեր ու արտեր. թէպէտ կը տեսնենք հոսկէ այդ լեռան գագաթները, այնպէս չէ՞, այլ հեռու է բանաստեղծներու համար պատրաստուած ճանապարհը, և ես ուրիշ ուղի մը չգիտնալով, քերթողաց յատուկ քարտէսի մը ցոյց տուած ճանապարհաւ ուղղուեցայ դէպ ի այդ լեռը:

Հետաքրքրութիւնը կը կրծէր սիրտըս որդի մը նման թէ ա՛յն շուտ հասնէի հող:

Մէկ երկու ժամ ևս քալելէ վերջ

լայնատարած մարգագետնի մը մէջ գըտնուեցայ. չգիտեմ թէ աշխարհագէտք ի՞նչ անուն կուտան այդ տեղի... բայց գիտեմ որ դալարեաց մէջ երփներանգ ծաղկունք, վայրի վարդեր, գունագեղ մանիչակներ եւ դեռ շատ իմ չճանչցած ծաղիկներ կը գտնուին հոյլ հոյլ արեւու վերջին ճառագայթներու տակ խատուտիկ փայլով մը. կը գգուէին՝ նա. յիլ ու դիտելն ջղերը թուլցած աչերս, կը գինոզնէին հարբուխէն նոր ազատած քիթս. կը շոյէին քալելէն խոնջած ոտներս. Աստուած իմ, հիանալի, հրաշագեղ, երկնապարգեւ վայր մի, ադենազարդ դաշտ մը, ի մի բան մուսայից արժանավայել գեղափնջի գորգ մը Պառնասի ստորոտն: Ի՞նչ կ'ուղեն ըսեն աշխարհագէտք, ես տոյսէս տեսայ: Նստայ կարկաչուն առուի մը մօտ ոյր հեղասահ վտակներն, ման ի ման մոռցնել տուին ինձ վայր մը ուղեւորութիւնս, նպատակս, ժամերուն արագազլոր վազքը վէտ վէտ ալեակներու նման զորս համրելու փափաք մ'եկաւ ինձ Նասրէթտին հօծայի նման:

Բացի խուրձս, կտոր մը հաց կտոր մ'ալ պանիր զոր Ակնցի բարեկամս տուած էր ինձ, հանեցի և կերայ ուրախ, ջուրն ըմպեցի զուարթ:

Հետզհետէ առուակին վճիտ գոյնը մթնցաւ, աչերս վեր առի, Տէր Աստուած, այս գիշեր ո՞ւր անցնելու է. առաւ մտմտուքը: Մէկ ժամ ևս յառաջանալէ վերջ մօտեցայ հսկայ լեռան մը, քիչ մ'ալ, քիչ մ'ալ, ահա Պառնաս լեռն. ուրախութեան սարսուռ մը խլրտեցաւ ոսկրներուս մէջ, քստմնեցաւ մարմինս. ճիշդ հաւու մը մորթն ունեցայ կարծես երբ կը մտածէի թէ մեծամեծ հանձարներ, անհամեմատելի խորհուրդներ պիտի տեսնեմ հող, հին կամ նոր, մեռած կամ ողջ, բայց խնդիրն, իղձս, ըլլոր բաղձանքս է գտնել մեր արդի քերթողները, Հայերը: Պաշարեալ այս խոհերով, աչերս տեսան — աղօտ լոյս մը լեռան ստորոտը, խուռչի մը մէջ պլպլացող. դէպ այդ կողմը ուղղեցի քայլերս, աւելի մօտենալով ավանակ մը եկաւ ականջիս զոր կրցայ դանաղանել թէ վայրի կենդանիներու չլին, մարդու ձայներ էին և մանաւանդ... ո՞վ Աստուած, ի՞նչ հրաշք, հայերէն էր խօսուած լեզուն որոց ձայներուն հետ Բէլապալի հոտ մ'ալ հասաւ քիթս, գրգըւեց պանիր հացով կիսակուլտ ստամոքսս: Տեղ չի կայ, տեղ չի կայ, շուտ թո՛ղ գայիր, անկիրթ մարդ մը երեսս ի վեր սկսաւ պոռչտալ: Այլ հաջիւ թէ ոտքըս ներս դրի լեռան այդ խուռչէն, չորս հինգ անձեր վրաս վաղելով, ձեռքերս սեղմելով հակառակ խոռոչապեսին խոժոռ նայուածքներուն, հիւրա-

սիրեցին զիս անուղիղ ան զերջին պայմաններովն: Բարեկամներ էին ներկայք, Հայ քերթողներ, որք հանգիստ կ'առնէին հող, գիշերելով Պ. Սթամատիատի սրահները, զոր ես քաղաքացիի խանութ պիտի անուանէի, եթէ մերայինք Պառնասեան սրահող չի կոչէին զայն: Ա՛հ, ո՞րչափ կ'ուզէի որ կալիփոսէի քարայրին նմանէր և ես ալ Տեղեմաքի...:

Շրթներէս աւելի ստամոքսս օրհնեց բարեկամներս որոնք գիտնալով աղոր վիճակը, չի խնայեցին ինձ պնակ մը խորտիկ մաքուր և իւղոտ մսէ, որուն նըմանը ժամանակ մը կը ծախէր մսավաճառ Պէշիրեան՝ ամաթեօններու: Կե՛ր, ար՛բ և ուրախ լե՛ր, ազատակեց Ալփասլան՝ բռնեցով զարնելով սեղանին, կապէլային պատիւը միշտ ողջ պահելու գիտամար: Ետէ՛յ աչք մը ըրու Պ. ըՍթամատիատի սրահ և ահա բաժակ մը գինի եկաւ, ո՛չ, գինի չէր, խմելէս վերջ ըմբռնեցի, Նեկտար է եղեր, զոր կերպով մը ձեռք է ձգեր պանդոկապետը Պառնասի դռնապաններէն...:

— Է՛հ, որչափ առնէի ի վեր հոս էք: — Երեք օր է ի վեր:

Եւ սկսան պատմել ինձ իրենց ուղեւորութեան միջադէպերը, արտասանել օղին, հովին, ամպերու ուղղած իրենց ոտանաւորները, յոյն պանդոկապետին և Պառնասի պահապաններուն հետ իրենց ունեցած կազ ու կուրն, ևն, ևն, որոց ձայնին անոյշ անոյշ քնացեր եմ մինչեւ լոյս. տակաւին հանգիստ առնելու ալ պէտք ունէի՝ եթէ հեշտահընչիւն և երկնալուր զանգակներու ձայնն չարթնցնէր զիս: Ի՞նչ է, ի՞նչ է:

— Մի՛ վախեր, յարեց ժողովրդական բանաստեղծը, ուսմիկը սիոփողը, մուսայից նախաձաշի ժամն է, յետոյ ժողովի պիտի նստին մինչեւ կէս օր, հուսկ ապա պիտի այցելեն քերթողներու, և թափթփեն իրենց աստուածաբոց կայծերն նոցա քառակուսի տպանդներու մէջ, բոցոտեն հանձարները:

— Ինչպէս գարի կամ յարզի դէպերն, այնպէս չէ՞, բայց այսօր մուսան այցելեց քեզ որ այսչափ անուշիկ կը խօսիս:

— Լուութիւն, պոռաց կոկորդէն գաւառացի նորեւեկ քերթող մը, պահապանը կուգայ զմեզ կանչելու, թուզի մը ձեռքը:

Վիթխարի արարած մը, գաւազի բնչացքով, սուր նայուածքով. հեգնոս ժպիտ մը միշտ կը պարէ շրթներուն վերայ, աչացը մէջ, խոկ կնճիւղներով լի ձակոտին վրայ կարելի է կարգաւ շատ մը տաք ու պաղ որ այս մարդուն գըլխէն անցեր է: Երկրորդ պահապանն է Պառնասի վերին դրան: որ ազդարար-

րեց կէս ժամէն ներկայանալ գանգագէտներու որոց քննութենէ վերջ կարող են ստանալ ունկնդրութիւն մը մուսայից ժողովին մօտ: Մեկնեցաւ մարդը կամ մարդակերպ արարածը՝ հազարդէլէ վերջ կարեւորը: Մահու և կենաց վարկեան, որչափ որչափ փափաքած են մերայինք որ իրենք լինէին աշխարհիս էն մեծ գանկով արարածներն, և որչափ անիծած են Կայր, Սէօմեօրինկը, Բեւլիէն, Պիտան, Սքիւրձայր, Պրուսէն, որք երկար ատեն գանկաբանական կուրնելով կրցան մուսաներն խոկ համոզել աղոր ճշմարտութեանը, ստուգութեանը և ենթարկել տալ ներկայացող բանաստեղծներու գլուխներն քննութեան:

Ամէն ջանք ըրի տոմս մը ձեռք ձգեցի: Քիչ շատ յուսարէն լեզուն գիտնալուս համար, այդ պատիւն ըրին ինձ:

Մեր բանաստեղծներ սկսան պատրաստուիլ երկրորդ զանգակին ներս մտնելու:

ԾԻՐ. ԿԱԹԻՆ

**ԱՍԳԵՏ Ա. Խ. ԶՈՒՆԳ**

Ազգիս նշանաւոր Ազնուականներէն՝ Պերճապատիւ Ա. Ս. Զուռը Ասպետն իւր Վեհափառ ինքնակալին Աւստրիոյ Փրանկիսկոս-Յովսէփի Ա. Կայսեր կողմէն յատուկ Ազնուականութեան արտուցու պատուեալ, և այլեւայլ առիթներով ասպետական բարձր կարգերու շքանշաններով զարգարեալ, վերջին օրերս ի մայրաքաղաքս Վիեննա գլուխուեւրուն կը բաղձար իւր հպատակութեան և խորին երախտագիտութեան ցոյցերն անձամբ իւր Վեհապետին ոտքը դնել, որով անցեալ նոյեմբեր ամսոյ 23ին առաւօտը Նորին կայսերական Վեհափառութեան ներկայանալու պատիւն ունեցաւ: Բաւական երկար գեղեցիկ ձառով իւր շնորհակալութիւնը յայտնեց Կայսրմէ իւր անձին առատաձեռնութեամբ այնչափ պատուարեր շնորհաց համար, և իւր գործառնութեանց ասպարիզին նկատմամբ տեղեկութիւն տուաւ: Վեհափառ Կայսրն երեք երեք խօսքը կ'ընդհատէր սիրալիր քաջալերական պատասխանով մը կամ հարցմամբ մը: Ասպետը պատշաճաւոր պատասխանով իմացնելէն ետև՝ թէ իւր ծննդավայրն ի Պուքովինա՝ Սուչավա քաղաքն է, իւր յԱրեւելս և մանաւանդ ի Կոստանդնուպոլիս վարած բազմամեայ յարատեւ գործունէութիւնը կը յիշատակէ, եւ թէ հիմայ առեւտրական աղմկալից գործերէ քաջուած՝ մարդասիրական, հայրենասիրական և գիտնական ասպարիզի վրայ կը զբաղի: և թէ՛ այս պատճառաւ

շատ մ'ընկերութեանց գլուխ կամ անդամ ընտրուած է: Նորին Վեհափառութիւնն իւր գոհութիւնն յայտնելէն եւ զհայազգի Ասպետն յորդորելէն վերջը որ իւր հայրենասիրական գործերը շարունակէ յօգուտ Կ. Պոլսոյ Աւստրիական դալթականութեան, հաճեցաւ ունկնդրութիւնը այս նշանաւոր խօսքերով փակել. « Եւ ես ի նշան կայսերական գոհութեանս ահա բարեկամաբար ձեռքս կուտամ Ձեզի: »

Ասպետն Զուռը այժմ Պատգամաւոր է Կ. Պոլսոյ Աւստրիացոց Հիւպատոսական հասարակութեան, Անդամ վաճառականութեան սենեկին, Դատաւոր յՕսմանեան խառն ատենի, և Աւստրիական գործակալ ի տեսչութեան մեռնաշնորհի: Պատուեալ է յԱւստրիական պետութենէն Փրանկ-Յովսէփեան շքանշանով և Երկաթի Թագի ասպետութեան երրորդ կարգի շքանշանաւ: (Հանդէս ամսօրեայ)

**ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ**

Պատգամաւոր խոսքիւն. — Պրուսայի Ազգիկոյէ գաւառակին գայմագամ անուանեցաւ Բաշիա էֆէնտի, գայմագամ էթրանսուի, և իրեն յաջորդեց Թահիր էֆէնտի, գայմագամ Ազգիկոյէի: — Կարնոյ Սպեր գաւառակին գայմագամ անուանեցաւ Բաղրալ պէյ, նախկին գայմագամ Ալաշկերտի: — Մշոյ կառավարիչ անուանեցաւ Հասան Սայրի փաշա, նախորդ կառավարիչ Եօզդատի:

Ասիւնան. — Սանկէ Միւթէմայիզի աստիճան տրուեցաւ Տիգրանակերտի կուսակալութեան հաշուակալութեան գիւանին դեր. տնօրէն Մուսթաֆա Ասլամ էֆէնտի: — Սանկէ ի Բ. աստիճան՝ Մախսուսէի վարչութեան ածուխի մատակարար Գարամանեան Յարութիւն էֆէնտի:

Պատգամաւոր. — Դ. կարգի Մէճիտիկոյէ պատուանշան տրուեցաւ Գարաքէչէլի Աշիթէթի անհատներէն Հաճի Պէթիր աղայի: — Բ. կարգի Մէճիտիկոյէ՝ Աեւանիկի վաճառականներէն Պ. Սալա: մոն Ալաթիլի: — Գ. կարգի Մէճիտիկոյէ՝ նոյն քաղքի վաճառականներէն Պ. Կիւսթափի:

— Կարնոյ հեռագրատան մէջ պաշտօնեայ մ'ևս պիտի աւելնայ 300 զը: ամսականաւ:

— Մարաշէն կ'իմացնեն թէ յուզկահարութեամբ ու աւարաւորութեամբ նըշանաւոր Զօր անուն աւագակին ընկերը՝ Վէլի Մամօ՝ սպաննուեր է և խուզարկութիւնը կը կատարուին ձերբաւկալելու համար Զօրն և իւր միւս ընկերները:

— Կարիճէն Երզնկա ուղեւորեր է Գ. զօրաբանակին հրամանատար Մէհմէտ Զէքի փաշա :

— Զմեռուան համար՝ կառավարական կարգադրութեամբ՝ գանազան տեղերէ քանի մ'օրէ ի վեր ածուխ կը բերուի մայրաքաղաքս . ածուխի գինն այժմէն սկսած է իջնել :

— Վիճակագիր մը պատրաստել հըրամայուած է կուսակալութեանց՝ պարունակող աստիճան ու պատուանշան ունեցող գաւառական պաշտօնէից անուններն ու պաշտօնն , աստիճանի տեսակն ու պատուանշանի աստիճանն և անոնց շնորհման թուականն :

— Կ'ապրիլն եղեր տակաւին 110 տարեկան մարդ մը՝ խիստ քաջաւորը՝ Պոլսոյ Այվանսարայ թաղին մէջ, 115 տարեկան կին մը Սուլթան Պէյազիտ թաղին մէջ պարապելով տակաւին իւր արհեստիւ՝ դայեակութեամբ , և 115 տարեկան նաւավար մը ի Սիւտլիւճէ՝ ի գործ դնելով ցարդ իւր արհեստն :

— Պանաթաս երեւան ելած է Պանտըրմայի ու Այտընճըզի կողմերն և սաստիկապէս կը ճարակի :

— Զրհանկիւր զօրաց պիտոյքներն ամբողջացնելու համար Ելմասկան նախարարութիւնը Քաղաքապետութեան պիտի վճարէ 6000 Փրանք :

— Մայրաքաղաքիս ջրամբարներու նորոգութեան առթիւ կը մտածուի Պէլկըրատ գիւղը փոխադրել Պուրուսըզ Մանտրա անուն ագարակը , հաստատուած լինելով որ այդ գիւղին այժմու գիրքը կը փաստէ Պէյօղլը Պէնտ կոչուած ջրամբարին :

— Պաղտասէն 12 պատանիք մայրաքաղաքս կը բերուին բարձրագոյն վարժարանաց մէջ դաստիարակուելու համար :

— Տիգրանակերտի Հայ-Կաթոլիկ կը զերականներէն Անդրէաս անուն քահանան , որ հրձիգութեան ու գողութեան դէպքի մը համար ամբաստանուած էր , մայրաքաղաքս բերուեցաւ :

— Իրէվիլիզայէն ի Լօրօս և ի Եմանեա շոգեշարժ թրամուէյի գիծ մը շինելու մենաշնորհ խնդրուած է :

— Ի Զմիւռնիա դրամանենդի մը տունէն գտնուեր է 200 տարուան ձեռագիր մեծածաւալ յունարէն գիրք մը , որ կը պարունակէ եղեր պատկերներ և քիմիական ինչ ինչ դեղերու և կեղծ դրամներու պատրաստութեան եղանակը :

— Ի Սելյանիկ ճարակեր են փողացաւ , կարմրախոտ ու ծաղկախոտ :

— Ի Սելյանիկ փողոցին մէջ սպաննուած ու ոչխարի պէս մորթուած գտնուեր է Եուսուֆ անուն երիտասարդ սափրիչ մը :

— Այլալըքի հեռագրական տնօրէն

անուանեցաւ Յակոբ էֆէնտի , նախորդ տնօրէն հեռագրատան էօմէր Աղա կայարանին , և իրեն յաջորդեց Նահիտ էֆէնտի , նախորդ տնօրէն հեռագրատան Գասթրանի : — Բումէլիի երկաթուղեաց թղթատարական առաջին կարգի պաշտօնեայ կարգեցան Թընկըր Միլիտիչ , Ալիքսան Սաստուրեան և Յովհաննէս Կիւմրիչեան էֆէնտիք :

— Այսընի երկաթուղոյն թղթատարական շրջուն պաշտօնեայ անուանեցաւ Գուշ Ատայի կայարանին պաշտօնեայնէրէն Վարդան էֆէնտի :

— Մուսանիա-Պուսա երկաթուղին կ'ըսուի թէ պիտի սկսի բանիլ յառաջիկայ գարնան : Շոգեխաւային առօրեայ երթեւեկութիւն մը պիտի հաստատուի Կ. Պոլսոյ և Մուտանեայի միջեւ , այնպէս որ կարելի պիտի լինի մի և նոյն օրուան մէջ Պուսա երթալ և անդ 3-4 ժամու պտոյտ մը ընելէ յետոյ դառնալ Պոլիս : Այս երթեւեկութեան յատկանալիք չոգեխաւուց ուղեւորութիւնը երեք ժամ պիտի տեւէ Պոլսէն ի Մուտանիս :

— Տէսէ-Աղան-Սելյանիկի երկաթուղոյն արածուութիւնը խնդրողներուն թիւը 24ը անցած է :

— Կայրանիս իտալական չոգեխաւուն վրայ տեղեկութիւն առնելու համար , իտալական դեսպանատան Սէզիա պահակ չոգեխաւը՝ Իտալիոյ ծովային նախարարութեան հրամանաւ՝ Սեւ ծով ուղեւորեր է : Կայրանիս ամիս մ'առաջ Օտեսայէն մեկնած էր Իտալիոյ համար ցորեն բեռնած : Վերջին անգամ Վոսփորի բերնէն 150 մըն հեռի տեսնուած էր Փրանսական նաւու մը կողմանէ : Այնուհետեւ որ և է լուր չէ առնուած Կայրանիսի վրայ :

— Մաղնիսայի կառավարիչ Քեամիլ պէյ մեռեր է :

— Ի Կասըզիւղ քարափ մը շինելու արտօնութիւն խնդրած է Վսեմ Աբիկ էֆէնտի Ունճեան :

— Էջիւրէի առեւտրական դատարանին նախագահ Սելեան էֆ. դատի ենթարկուեր է , ապօրէն ընթացից մէջ գտնուած լինելուն համար :

— Պուկար կառավարութիւնը կ'արգիլէ եղեր Հրէից մուտքն իւր երկրին մէջ :

— 400 Բումէլիցի գաղրականք երեքշաբթի օր Վառնայէն մայրաքաղաքս եկան :

— Ի Զմիւռնիա , Մէհմէտ Տէտէ անուն մարդ մը ձերբակալուեր է՝ պատժական ատենի խորհրդակցութեանց սենեկին մէջ կախուած վերարկու մը գողնալուն համար : Վերարկուն կը վերաբերի եղեր դատարանին օգնական անդամ Մէհմէտ էֆէնտիի :

— Մեքի Աւեսիս անուն մարդ մը 3 ամսուան բանտարկութեան դատապարտուեցաւ՝ եկեղեցիէ մը շապիկ գողնալուն համար :

— Զմեկաձախի Պօղոս գիւղէն տասը աւազակներ 22 ոչխար ու այծ յախըլտակելով , ճամբան կը հանդպին շրջուն պահակ զինուորաց , որոց չուղելով յանձնել անասունները , զէնքի դիմեր են . զինուորք ևս պատասխանելով , աւազակը իրենց աւարը թողուցեր ու փախեր են : Այդ անասունք իրենց տեարց յանձնուելու վրայ են եղեր :

— Հայ կին մը , քսանհինգամեայ Զէնկիլէր գիւղացի , զարմանալի համբերատարութիւն մը և արիւթիւն մը ցոյց տուած է բժշկական վարժարանին մէջ , առանց քլօրօֆօրմով դրայազերկ լինելու՝ կէս ժամ դիմանալով իւր թելին վրայ գտնուած ուռեցք մը հանելու համար կատարուած վիրաբուժական գործողութեան մը : Աթոռի մը վրայ նստեր և հորիզոնական կերպիւ անշարժ բռներ է թելը , առանց ճիչ մ'արձակելու : Գործողութենէն յետոյ՝ խնդալով քններ է հանուած ուռեցքն և ներկայից կողմէ եղած շնորհաւորութեանց մէջ տեղ մեկներ է , ազօթելով վասն կենաց Վեհ Սուլթանին :

— Սերեզէն կը գրեն թէ Սիտերի Փափագօղլու , 25 օր առեւանգուած մնալէ յետոյ , արձակուեր է 600 օսմ. ոսկւոյ փրկանքի փոխարէն :

— Այսընի մէջ երեքշաբթի երեկոյ հրդեհ ծագելով , մոխիր դարձուծեր է հրէաբնակ թաղն , ուր հրոյ ճարակ եղեր են 200 տուն և 2 սինակոկ : Ութ մարդիկ այրեր և շատեր վիրաւորուեր են :

— Անասօլուի երկաթուղոյ ընկերութիւնը պիտի ձեռնարկէ շինել կէպէլի կամուրջը : Պիտի ծախուի 20 հազար օսմ. ոսկի :

— Կողոպտուեա են Պէյօղլուէրէի , Պաղչէքէյի , Տօմուզ Տէրէի , Պելրատ գիւղի և Նիկոմիդիոյ յունական եկեղեցիները :

— Էջիւրէի նահանգին ընդհանուր դատախազ Րէշիտ պէյ Պոլիս կանչուած է ինչ ինչ բացատրութեանց համար :

— Եւնեբու յասուկ նոր կանանազիւրը թէեւ ամիսէ մը ի վեր գործադրութեան դրուիլ սկսած է թաղապետական շրջանակաց կողմանէ , բայց պաշտօնեայք դժուարութեանց հանդիպած լինելով , Քաղաքապետութեան զայնս տեղեկագրած է առ Բ. Դուռն :

— Բումէլիի երկաթուղեաց վերջին վիճակահանութեան մեծ պարգևը , 600,000 Փրանք , 5 դրուչով շահեցան Պոլսոյ Զէմպէրի թաղ թաղը բնակող Զիբքինեան Սեդրակ և Միրիճանեան

Յովհաննէս անուն Արապկիրցի երկու հայ բօլիցածիններ, որոնք 100 ահան փարա միացնելով՝ ընկերութեամբ պարտատոմսի մը բազդը գնած էին ի Պահչէ Գաբու Աւետիս անուն սեղանաւորին: Աւետիս աղա իւր ունեցած պարտատոմսերն նոյն օրը ծախած սպառած լինելով, շատ դժկամակութեամբ ծախեր է սոյն բազդատոմսին բազդը: Տոմսը իւր քով կը պահէ Չիրքինեան, իսկ Միրիճանեան կը բաւականանայ տոմսին թիւը գրելով: Վիճակահանութենէ ետք Չիրքինեան ստուգելով որ այդ տոմսը չահած է առաջին պարգևը, սատանան կը թեւադրէ զինքը զրկել իւր ընկերը իւր արգար բաժինէն: Խորհուրդ հարցնելու կը դիմէ իւր քեռայրին: Սա կը խոստանայ ամբողջ գումարին տիրանալու եղանակը ցոյց տալ իւր ծառայութեան փոխարէն 3000 ոսկի ստանալով: Համաձայնութիւնը կը գոյանայ: Կ'որոշուի 1000 ոսկի խոստանալ սեղանաւոր Աւետիս աղային, որպէս զի յայտարարէ ի հարկին թէ առաջին պարգևը չահող թիւը իւր ծախածը չէր: Այն պահուն երբ այս նպատակաւ Աւետիս աղայի խանութը կը գտնուէին, միւս կողմանէ Միրիճանեան ևս տեղեկանալով որ իրենց գնած թիւը չահած է առաջին պարգևը, ստուգելու համար սեղանաւորին կը դիմէ: Աւետիս աղա կը յայտարարէ զուտ ճշմարտութիւնը: Չիրքինեան և Միրիճանեան վէճի կը բռնուին: Նոյն միջոցին կ'աներեւութանայ Չիրքինեանի քեռայրը որու յանձնած էր տոմսակն իւր աներորդին: Կը հաշտուին կռուողք և փախտականը փնտռելու կ'ենեն: Առանց ժամանակ կորսնցնելու կը դիմեն Օսմ. Պանքայի և Քրէտի Լիօնէի Պոլսոյ ու Ղալաթիոյ գըրասենեակները և կը խնդրեն վճարումը մերժել, եթէ առաջին պարգևը չահող թիւը բերող մը գտնուի: Պատասխան կ'ընդունին թէ պարտատոմսն որու ձեռք որ գտնուի, նա կ'ստանայ դրամը ոչ միայն ի Պոլիս, այլ աշխարհի ամէն կողմը: Խուզարկութիւններ կատարելով վերջապէս կը գտնեն քեռայրը: Երկու ընկերք, տեսնելով որ այսպիսի անհամաձայնութեամբ բոլորովին պիտի կորսնցնեն իրենց չահած պարգևը, կ'հաստատեն իրենց մէջ կազմեալ ընկերութիւնը՝ ըստ օրինի մուրհակ մը պատրաստելով: Քեռայրը, առարկելով թէ 6000 ոսկի պարտի իրեն իւր աներորդին, մերժած է տոմսակն յանձնել մինչև որ այդ գումարը չ'ստանայ:

— Ռոստոյի կը գրեն թէ Ռեմուրճա ագարակին տնօրեն Պ. Բէյմօնը առևանգող գլխաւոր աւազակներէ մին գրտնօքեր է կանացի թուրքերանութեան շնորհիւ: Իրբեւ կանակած ելի ձերբակալ-

ուած և ի Ռոստոյի բանտարկուած էր նաեւ Արկիրի անուն հովիւը: որ մի օր բանտին ուտեստ հայթայթող նպարավաճառին գաղանապէս տոմսակ մը տըլաւ իւր կնոջ ուղղեալ, որպէս զի այս վերջինէն ստանայ 200 ոսկի և այս գումարին միջոցաւ բանտապահներուն հետ համաձայնի զինքը փախցնելու համար: Նպարավաճառը՝ ուրախութեամբ ընդունելով առաջարկը՝ հովիւին տունը երթալէ առաջ խնդրին յայտնեց իւր կնոջ, որ իւր կարգին՝ իւր ամուսնոյն գաղտնիքն յայտնեց մի դրացի կնոջ: Երկու օր չանցած, քաղաքին մէջ ամէն ոք այս խնդրոյն վրայ կը խօսէր: Նըպարավաճառը ձերբակալուեցաւ, հովուին տունը խուզարկուելով թաղուած գտնուեցաւ 750 ոսկոյ գումար մը որ իրեն բաժին ընկած էր 5000 ոսկի փրկանքէն: Հովիւն Անդրիանուպոլիս տարուեցաւ, ուր յայտնեց իւր ընկերներն որք հաւանօրէն ի մօտոյ կը ձերբակալուին:

— Իլիաս էֆ. Չայեան, խորհրդականի օգնական Արտաքին գործոց նախարարութեան, Իւլայի Ա. աստիճան փոխապետ:

— Նոր չափերն ու կեիւներն նոր դրութեան մը վերածել առաջարկած է Ռուբէն էֆ. անուն մարդ մը:

— Կայրանո շոգենաւիկ, վերջին լըրոց համեմատ, Սեւ ծովուն մէջ ընկղւմած լինելը տեսնուել է Բաքլի ընկերութեան Սիրախի չոգենաւուն նաւաստեսաց կողմանէ: Կայրանո Օտէսայէն բեռցած է եղեր 4500 թօնէլաթօ ցորեն:

— Յանձնաժողով մը կազմուած է, նախագահութեամբ Ելմտական նախարար Վսեմ. Նալիֆ պէյի, քննելու համար Հանրային Պարտուց Վարչութեան և Օսմ. Կայս. Պանքային՝ Կայս. կառավարութեան հանդէպ ունեցած գործառնութիւնները: Յանձնաժողովին կ'անդամակցի նաեւ Կայս. անձնական Գանձուն նախարար Վսեմ. Փորթուգալ Միքայէլ էֆէնի:

— Չայիսի արժանանալ պատուանշանի, աստիճանի և պաշտօնի բարձրացման այն պաշտօնեայք որք իրենց կենսագրութիւնը չեն յանձնած ընդհանուր վիճակագրութեան դիւանին:

— Քասրնկերու մէջ ոստիկանութեան պաշտօնեայ մը պիտի գտնուի թատերաստուրը քննելու և հանրային բարոյականութեան հակառակող պարագայներն արգելելու համար: Իսկ Կրթական նախարարութիւնը որոշած է քննիչ մ'անուանել, ամառնային թատերոններու մէջ ներկայացմանց համար արանց և կանանց յատուկ զատ զատ օրեր սրոշել, և դերասանաց ու դերասանուհեաց վիճակը բարեկարգել: Այս խնդիր պիտի մատուցուի Բ. Դրան:

ՆԱՄՍԿԱՏՈՒՓ «ՄԱՂԻԿ»

Ա. Կ. Շումլա. — Ստացանք 4 ֆր. 2:

Յ. Դ. Կասապա. — Ձեր զրկած 50 զր. 2 ստացած եմք: — Ձեր յօդուածը չհրատարակեցինք, վասն զի զայն ըստանալէ առաջ՝ նոյն նիւթին վրայ երկու յօդուած հրատարակած էինք արդէն:

Բ. Ա. Մարգուան. — Կանխիկ վճարուած յանձնարարութիւնք միայն կը կատարուին:

Կ. Ե. — Սուկուրու. — Ղրկեցինք Ձեզ Ս. Գաբամաճեանի բառարանին թերթերը մինչև թիւ 22 Ձեր բարեկամին համար, եւ 16-22 թիւերը՝ Ձեզ համար: — Ստացած եմք Ձեր նախապէս զրկած 60 զր. 2, եւ այժմ՝ 16 զր. 2:

Ա. Մ. Բաբեդ. — Անոնք որոց բաժանորդագրութիւնը դեռ չէ լրացած, բնականարար կը շարունակեն ընդունիլ իրենց թերթերը. իսկ անոնք որոց պայմանագրով լրացած լինելով վերստին կուզեն թերթ ընդունիլ եւ անոնք որոնք նոր բաժանորդ դրուելու փափագ յայտնած են, պարտին կանխապէս վճարել իրենց բաժնեգինը: — Ստացանք Ձեր վեցամսեայն:

Ս. Յ. Եղեպիա. — Ձեր յանձնարարածները մնացին առ այժմ, վասն զի Գ. անտուկ չունի զրկելու այս օրերս:

Դ. Վ. Յ. Երուսաղէմ. — Գանձեցինք: — Կ'ստանաք:

Բ. Հ. Իւսկիւսար. — Շատ միամիտ եղած լինելու էք կարծելու համար թէ, հակառակ այս նամակատուիին մէջ՝ կը զած բացարձակ յայտարարութեան մը, Ձեր ակնարկած յօդուածը տպած եմք՝ «Ծաղիկ»ի մասին գովեստ պարունակելուն համար: Մենք զայն հրատարակեցինք միայն իրբեւ նմոյց: Թէ՛ ի՞նչ բանի նըմոյց, զայդ լաւ եւ շուտ հասկցան նոքա որք զմեզ մօտէն կը ձանձան եւ ուշադիր եղան այդ գրուածքի լեզուին ու ոճին:

---

ՏՕՆԱՑՈՅՑ. Բանախօսութիւն Տքթ. Ալլ. Լոնկի. գործ Բ. Ռօպէրթ Գօլէճի Հայ ուսանողաց. Գին 60 փարա: Կը գտնուի «Ծաղիկ»ի Խմբագրատան մէջ:

---

Ա. Բ. Ժ. Բ. Դ. Բ. Մ. Բ. Ս. Բ.

Օսմ. լիւրս 100 զր. 2

Մէճիթի	107	48	վ. Եջնոց	103	8
Քառորդ մէճիթ	106	25	Բուհոյ բոլ	90	5
Մանր մէճիթ	102	40	Նարոյէն	87	28
Մէթալիթ	98		Գրիմից	51	20
Հինգնոց	101	4/4	Անգլ. լիւր	110	40
			Մանթիթ թղթագրամ	9	40
Գոնսոյիտ	49	42	Բուս. Երկ.	62	4/2
Թահիլէ Օսմ.	72	10	Թասպիլէ	22	

13)

# Մ Ե Ռ Ե Ա Լ Կ Ի Ն Ը

Առաւօտ մը, երբ հրացանն ուսն առած շանը հետ կը պտտէր իւր անտառաց սահմաններուն վրայ, հրացանի հարուած մ'արձակեցաւ դաշտին մէջ, իրմէ շատ քիչ հեռի, և նապաստակ մը չոր տերեւոց մէջէն դուրս ելնելով, եկաւ գրեթէ իսկոյն դարիլ իւր ոտիցը ներքեւ: Մի և նոյն ատեն բոլորովին նորօրինակ կերպարանքով մարդ մը, մէկ ոտամաք անցաւ դաշտարարդ հողաբլրակէն որ կ'անջատէր անտառը դաշտին և ինքզինքը դուռ նապաստակին և Պ. տը Վօտարիգուսի առջեւ գրեթէ երկու քայլ հեռի:

— Ներեցէք, Պարոն, ըսաւ անձանթը, ամենայն հանդարտութեամբ, այն նապաստակը ձեր անտառին մէջ մեռաւ, բայց հրացանն դաշտին մէջ պարպեցի, և կործեմ թէ ինձ կը վերաբերի այն:

Պ. տը Վօտարիգուս, զայրացած ու զարմացած միանգամայն, անմիջապէս չպատասխանեց այս ազգարարութեան: Այս անձը որ աչքին առջեւն էր, քսանամեայ կին մ'էր յոյժ գեղանի. կը կրէր որսի զգեստ մը չափազանց պարզ, տեսակ մը կարճ բաճկոնակ թուխ բրդեայ կտակէ, թուխ լայն տախտակ մը, շիկագոյն կաշիէ սունապաններ և տիւրօլեան թեթեւ դիւարի մը:

— Սասուած իմ. ի՞նչ կ'ըսէք, տիկին, պատասխանեց վերջապէս Պեռնառ. խնդրը, սկզբամբ, մտածել կրնայ տալ, բայց քանի որ դուք էք տառապիտղը, տարակուսի տեղի չը մնար... Ահա՛ ձեր նապաստակը, առէ՛ք:

Մանկամարդ կինը նապաստակը առաւ կոմսին ձեռքէն, շնորհակալութիւն յայտնեց նմա բաւական վէս դիւրի շարժմամբ մը և անտառէն հեռանալ սկսաւ:

Նոյն վայրկեանին, Պեռնառի շունը զոր մի քիչ կառկեցուցած էր նապաստակի դէպքն, անտառին մէջ անյաջող կերպիւ կը հալածէր քսանի չափ կաքաւուց երամ մը: Պ. տը Վօտարիգուս հաղթեալով լեցուց իւր հրացանը և երկու հարուած պարպեց, Բայց ինքն մտազբաղ լինելով, թէև կաքաւը հեռի չէին իրմէ, չկրցաւ զարնել անոնցմէ և ոչ մին:

Մանկամարդ կինը որ զառիթափին մօտ կեցած էր տեսներու համար թէ ինչ արդիւնք պիտի ունենային այդ հարուածները, վրիպեցան, գոչեց իւր ծանր և երաժշտական ձայնիւ:

Յետոյ մեզիւ ժողովն անդին ցատկեց և հեռացաւ:

Պ. տը Վօտարիգուս դժնեայ հայեցումներով մը հետեւեցաւ անոր, մինչև որ մանկամարդ կինը անյայտ եղաւ ճամբուն մէջ, յետոյ մրմնջեց. «Ո՞վ է այս խեղդատակ կինը»: Եւ սկսաւ վերտօնի լեցնել իւր հրացանը, և մտախոհ շարունակեց իւր շրջանը: Մի քանի վայրկեան յետոյ իւր պահնորդներէն միոյն հանդիպեցաւ և հետեւեալ խօսակցութիւնն սկսեց անոր հետ:

— Գոցէ՛ դըրևիդ, Լըպիւթէօ, դի՛ր գլխարկդ... Տեսնեմ, ըսէ ինձ, Լըպիւթէօ, ո՞վ է այդ կինը որ մանչու ըզգեստ հագած շրջակայներն որսորդութիւն կ'ընէ և որ խաղաղօրէն քիչ մ'առաջ արունքներուս մէջտեղ եկաւ սպաննել իմ նապաստակներէս մին և յանդիպեցաւ մինչև իսկ գալ զայն ինձմէ պահանջել:

— Ա՛հ, Պարոն կոմս, ըսաւ Լըպիւթէօ, այն տխուր ժըպտով զոր ձերունի զինուորք կը կրեն իրենց դիմաց վրայ, Լա Սօլէյի օրիորդն է թերևս... օրիորդ Սապինը:

— Ի՞նչ, օրիորդ մ'է՛ նա, յարեց կոմսը: Ուրեմն այս այն աղջիկն է որ Լա Սօլէյ կը բնակի այն ձերունի գիտուն բըժիշկին հետ:

— Այնքան ծեր չէ բժիշկն, պատասխանեց պահնորդը, իրաւ է թէ կեանքը գրեթէ մէջ կ'անցնէ... նա բնաւ չորսար... Գալով օրիորդին, ա՛հ, երբ որսի ելնէ, բնաւ չը ձանչեր իմս, քուկդ...: Արդէն ամէն կին այսպէս է, տըրամարանութիւն մի՛ վնասէք անոնց քով: Այդ օրիորդը միշտ ձեր սահմանագծերուն վրայ թափառելու վրայ է... և բնաւ չըջառելի իւր որսն հալածելէ ձեր անտառաց մէջ, թո՛ղ լինի այն չորքոտանի կամ թուշուն, կենդանի կամ մեռեալ:

— Եւ ո՞րչափ հանդարտութեամբ կ'ըսէք զայս ինձ, Լըպիւթէօ, բայց անտանելի է այս. պէտք է բարեբաղիւր մը պատրաստել անոր դէմ, երբ ձերբակալես գնա:

— Շատ լաւ, քանի որ պարոն կոմսն այդպէս կը հրամայէ, բնականաբար ամէն ինչ պիտի գործադրուի...: Սա կայ միայն թէ Լա Սօլէյի բնակիչք, ինչպէս Պարոն կոմսը քաջ գիտէ, այնպիսի անձինք են զորս լաւ չեմ համարիր նեղելը:

— Ի՞նչու, մի՞թէ կախարդներ են նոքա:

— Ո՛չ, Պարոն կոմս, և եթէ օրիորդ Սապինի այս շարակամ գաղտնորդութիւնը չլինէր, կարելի էր ըսել թէ բարի անձինք են նոքա որք երկրին մէջ մեծ բարեգործութիւններ կ'ընեն:

— Այո՛, այո՛, կրնայ լինիլ: Բայց այսու հանդերձ թո՛ղ օրիորդ Սապինը մէկ մ'ալ հոս չերեւի...: Մնաս բարեաւ, Պիւթէօ, մնաս բարեաւ... և նայէ որ մի քիչ խիստ լինիս:

Եւ Պ. տը Վօտարիգուս իւր ճամբան շարունակեց սպասնալից դիրքով մը գլուխն երեքցնելով: Բայց հազիւ թէ մի քանի քայլ առեր էր, իւր բարկութեան յաջորդեցին առաւել քաղցր մտածումներ, որպէս կ'ապացուցանէ սա խորհրդածութիւնը զոր կ'ուզէր իւր անձին. «Եւ սակայն յոյժ գեղանի աղջիկ մ'էր. իրաւ է թէ չափազանց գոռու, բայց նաև յոյժ վայելչակալմ»: Ճաշի միջոցին Պեռնառ զուարթօրէն պատմեց իւր կնոջ և հիւրերուն Լա Սօլէյի օրիորդին հետ ունեցած դէպքը որ այնքան նշանաւոր բան մը չէր:

— Ի՞նչ, Լա Սօլէյ, ըսաւ Ալիթ: Միթէ սա տխուր բընակութիւնը չէ՞ որ մեր ձախ կողմը կը գտնուի Գոմմիկներու ճամբուն վրայ, շրջապատեալ մեծամեծ ուռենիներով որոց ձիւղերը վարսածեւ կը կախուին բոլորովին տխրատեսիլ լճակի մը վրայ:

— Այո՛, պատասխանեց Պեռնառ, անցեալները ի միասին դիտեցինք զայն... Տեսակ մը անգղիական տուն է, որ արդարեւ շարագուշակ երեւոյթ մ'ունի այդ մեծ ուռենիներուն պատճառաւ... և ո՞վ կը բնակի հոն:

Սեղանակիցներուն մէջ երկու երեք մարդիկ կային գաւառէն որք բաւական երկդիմի կերպով պատասխանեցին այս հարցման: Կ'երեւիր թէ Լա Սօլէյի բնակիչք ընդհանրապէս դէժ աչօք նայուած էին շրջակայից աղնուապետութենէն, Լա Սօլէյի դեղեակը կը պատկանէր Թալլըփօ անուամբ բժիշկի մը որ ի վաղուց հետէ իւր քով առած էր ազգական աղքատ կին մը, մի հիւանդ պառաւ մորաքոյր իւր աղջկանն հետ որոյ պաշտպանն էր: Ի սկզբան Բարիգու մէջ բժշկութիւն ըրած էր, յետոյ բաւական մեծ կակ հարստութիւն մը ժառանգած լինելով, թողուցած էր իւր յաճախորդները, որք արդէն բազմաթիւ էին և դիւզը քաշուած էր հետեւելու համար իւր ճաշակաց և զուտ գիտութեամբ զբաղելու համար անդ: Իւր ուսումնասիրութեանցը մէջ ընկղմեալ և իւր ժամանակն յոյժ խնայող, գաւառին ամենէ աղքատ դասուն միայն կուտար իւր խնամքն ու խորհուրդները, անխնայ մերժելով հրաւերն ամէն անոնց որք կարող էին բժշկի դըրամ վճարել: Այսպէս դժգոհ ըրած էր բազմաթիւ անձեր որք երբեմն շատ հեռաւոր վայրերէ կը դիմէին իրեն՝ իւր

գիտութեան և գործնականի մէջ ունեցած ճարտարութեան համբաւէն հրապուրեալ, և որք անգթօրէն կը մերժուէին: Վերադարձին բանբասանքներ չէին խնայեր նորա դէմ: Այլ կարելի չէր ուրանալ իւր արժանիքը. գաղղիական ակադեմիան դեռ նոր վարձատրած էր իւր գիտական աշխատութիւնները թղթակից-անդամի տխուրոտով մը: Բայց ազատասիրտ իմաստասիրութեան իւր յայտնի վարդապետութիւնները, իւր ընտանեկան մի քիչ խորհրդաւոր կեանքը, իւր ձեռնասուն աշակերտուհւոյն գեղեցիկութիւնը, այն անհեթեթ դաստիարակութիւնը զոր կուտար նմա, այս ամէնքը նուազ բարեխօս մեկնութեանց նիւթը կը կազմէին, ի մասնաւորի շրջակայ գրեկաց մէջ:

Թէև յաջորդ օրերը, Վօտուիգուռի կոմսն բազմապատկեց իւր խուզարկութիւնները իւր ստացուածոց սահմանագծին վրայ, բարեբաղդութիւն չունեցաւ սակայն տերեւազարդ հովանոյն մէջ կրկին փայլիլը տեսնելու օրիորդ Թալլըվօի սեւ և սպառ սզգու աչաց: Մի գուցէ յանդուգն որսորդուհին Լըպիւթէօ պահնորդէն գաղտնի սզգարարութիւն մ'ընդունած լինի՝ կոմսին կողմանէ յայտնուած խիստ գիտաւորութեանց մասին, և հեռացած՝ տեղի չտալու համար բողբոջաբլի մը սովորական սպառնալէսոց. Թերևս, ինչպէս երբեմն կը պատահէր, նա ստիպուած էր մնալ իւր բազմահմուտ պաշտպանին մօտ որ մեծցուցած էր զնա փոխն ի փոխ ծառայելու համար իրեն՝ իրրեւ քարտուղար՝ իւր աշխատութեան սենեկին մէջ, և՛ իրրեւ օգնական՝ իւր քիմիական գործանոցին մէջ. քան զի բնալուծութեան և բնագիտութեան փորձերը բնականաբար մեծ տեղ մը կը զբաւէին իւր աշխատութեանց, ինչպէս նաեւ զբօսանաց մէջ: Ինչ որ ալ լինի, մինչեւ ի լրումն այս եղանակին, օրիորդ Թալլըվօ բնաւ չերեաց իւր դրոցւոյն: Անգամ մը միայն, երբ երեկոյին իւր կնոջն հետ ձի հեծած Լա Սօլշի դեղեկին առջեւէն կ'անցնէր, Պեռնաու կարծեց ընդհամարել իւր գեղեցիկ թշնամուհին որ ստուէրի մը հանգոյն կը յառաջանար փոքրիկ ամբարանոցին պարտիզին մէջէն: Արդէն Ալիթի՝ Լա Սօլշի բնակչաց նկատմամբ չէր ուզեր մասնակցիլ իւր ամուսնոյն հետաքրքրութեանց: Այն տեսակ մը գաղտնիքը որ կը տիրէր այդ մեհակեաց ու լըին տան վրայ, կը խօսէր իւր վիպային երեակայութեան: Ընդարձակ վրանածէ չէնք մ'էր այն աղիւսաչէն, շրջապատեալ ամէն կողմանէ ծառոց թուփերով, մարգագետիններով, ծաղկոցներով, ոչ լաւ մըշակեալ և անշուշտ գիւղացի պարտիզպանի մը ճաշակին թողուած: Յորմէ հետէ լճակին մեծ ուռենիներն տերեւաթափ էին եղած, այդ բնակութիւնը նուազ մթին կ'երեւէր, բայց այսու հանդերձ միշտ իւր կոշտ դիրքը կը պահէր և այն ջրոյ չեղջը որոյ վրայ կ'ապականէին անկեալ տերեւք, միշտ նոյն տխուր մակերեւոյթը կ'ընծայէին աչաց:

Եւ սակայն, մի քիչ ուշ, բայց վերջապէս հասաւ ձմեռն խիստ և սաստիկ: Իրենց ամենամտերիմ այցելուներն ի Բարիզ դարձած էին, թողլով զոտեր և գտիկին տը Վօտուիգուռ վառարանին շուրջը: Զիւնալից կամ անձրևէ տղմաթաթու ուղիներն ընդհատած էին դրացեաց հետ արդէն հապուադէպ ու և է յարաբերութիւն: Եղանակին անբարեխառնութիւնք որսորդութիւնն յաճախ անասնելի կամ անկարելի իսկ կ'ընէին: Զբօսանքներն ուրեմն յոյժ սահմանափակ էին և իւրաքանչիւր ոք պարտէր իւր զբօսանքը ինքն իսկ ստեղծել: Պեռնաու՝ որ իւր սիրտը զօրացուցած էր, կանխաւ քաջ նախատեսելով փորձանքն, կրցածը կ'ընէր դիւցազնութեամբ տանելու համար այս վիճակը: Առաւօտները՝ թղթաբերին ընդ առաջ կ'երթար; ծառուղւոյն մէջ, և այս շահուած վայրկեան մ'էր իրեն համար: Երկարօրէն կ'ընթեռնուր իւր օրաթերթերը. գովելի գործունէութեամբ կ'զբաղէր իւր ձիերով, իւր ախոռներով, իւր փառաւոր

թամիկերով: Իւր կնոջ հետ դաշնակի կտորներ կը պատրաստէր. վերստին սկսած էր ջրանկարչութեան զոր երբեմն մըշակած էր և զոր կ'ուսուցանէր Ալիթի: Երեկոյին ի միասին կ'ընթեռնուին մի քանի հին սիրեցեալ հեղինակներ, յիշատակարաններ, մի քանի արդի բանաստեղծներ ու գրքուածներ, ժամանակիս նշանաւոր քննադատութիւնները, անգղիական վիպասանութիւններ: Քաղցր էր այս կեանքն Ալիթի համար, որուն ձանձրոյթի ոչ մի վայրկեան կը թողուին իւր թղթակցութիւնքը, առտնին կենաց հոգածութիւնը, իւր դստեր դաստիարակութիւնը, և վերջապէս, իւր կրօնական պարտաւորութիւնք: Բաց աստի, գիւղի ճաշակն ունէր, բնութեան տեսարանք իրեն համար՝ ձմեռուան մէջ իսկ՝ տեսակ մը բանաստեղծական կարեւորութիւն ունէին: Իւր երջանկութիւնը վրդովող միակ բանն էր սա մտածումը թէ արդեօք իւր ամուսինն ալ երջանկի էր, ինչպէս էր ինքն: Հակառակ այն բարի վարմանց զորս կը փորձէր պահել, Ալիթի ստէպ կը նշմարէր նորա դիմաց վրայ և նոյն իսկ նորա խօսակցութեան մէջ՝ մթին մտախոհութեանց, անհամբերութեան և դառնութեան նշաններ:

Ճշմարտութիւնը սա է թէ Պ. տը Վօտուիգուռ մահու չափ կը ձանձրանար և կը ջանար ըստ կարելոյն ինքզինքը գոհ ցուցնել իւր կնոջ առջեւ. բայց երբ, գիշերը, իւր սենեակը կը քաշուէր, ի զուր սիկառ սիկառի վրայ կը ծխէր անհետ ընելու համար զինքը հիւժող սեւ մեղմազնութիւնը: Կանգուն կը մնար իւր պատուհանին առջեւ, կը դիտէր դաշտաց և անտառաց խորին մթութիւնը, ունկն կը դնէր ձմեռնային սաստիկ քամիին որ ծառոց կատարներուն մէջէն սաստիկ կը փչէր հեռաւոր կոհակներու ծածանման շառաչիւնով մը,— և իւր միտքը յանկարծ կը փոխադրուէր դէպ ի իւր սիրեցեալ Պուլըվաուն որ այդ ժամուն իսկ Ծիր Կաթիլնի մը նման կը փայլէր: Կը տեսնէր թատրոններու լուսավառ սինապարդ ճակատները, սգեւարեալ ամբոխը որ կը խոնկէր զուարթ վաճառատանց առջեւ, ամենուրեք խճուղեալ կեանքը, կը թուէր իրեն թէ կը շնչէր Պուլըվաուի գիշերային մասնաւոր բուրումները, կազերու, ծխախոտի, գետնափոր խոհանոցներու խառնուրդը, և ծաղկավաճառներու կրպակներէ մերթ ընդ մերթ դուրս ելած բուրմունքը. կը շնչէր ակուսի սրահներու, թատրոնի կողմանոցներու, դերասանուհեաց օթեակներու մասնաւոր մթնոլորտը, կ'ըզգար նաև թատրոններէ ելնելու պահուն անդաստակներու և սանդուղներու գոլորչին, թանկագին մուշտակներու ու մերկ ուսոց սզգու հոտերը: Բոլոր այս առաւել կամ'նուազ մաքուր զգայական հաճոյքներն, որոց մէջ կը հրճուի բարիզեան զբօսանքի ամբոխը, Պեռնաուի երեակայութեան մէջ կ'առնուին՝ գիւղական միայնութեան և լըութեան մէջ՝ հրապուրի և գլխման մի սոսկալի զօրութիւն:

Այս նկատմամբ նա մի եզակի և շատ հասարակ սխալման մէջ կ'իյնար. կ'երեակայէր որ Բարիզ կը պակսէր իւր իմացականութեան, մինչ իրականապէս միայն իւր զգայաբանաց կը պակսէր այն: Խելացի մարդ էր, ուսումնասէր ալ եղած էր մինչեւ այն օրն յորում բացարձակ սիկստակաւնութիւնը միայն հաճոյցի ճաշակը թողած էր երեւն: Հակառակ ամենայնի, գաւառ աքսորեալ Բարիզեցիներու մեծամասնութեան նման, նա կը չողքորթէր ինքզինքը երբ կը կարծէր զրկուած լինել Բարիզու մտաւորական կեանքէն, մինչդեռ ստուգիւ կը ցուէր՝ մի միայն զրկուած լինելուն համար Բարիզու զբօսանքն, շրջապիւռ բերկրութեանէն, աշխարհային յիմարութիւններէն և մանաւանդ կանացի քաղցր բուրումներէն:

(Շարունակելի)



# ԲՈՒՄԷԼԻԻ ԵՐԿԱԹՈՒՂԵԱՑ

129րդ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

1 Դեկտեմբեր Ն. Տ. 1891

OBLIG. N°	PRIMES FRs	OBLIG. N°	PRIMES FRs	OBLIG. N°	PRIMES FRs	OBLIG. N°	PRIMES FRs	OBLIG. N°	PRIMES FRs
356980	600,000	4916070	3,000	508689	3,000	4729707	1,000	4409236	1,000
366208	60,000	499693	»	475762	»	4277424	»	4499726	»
4622878	20,000	4579258	»	332465	1,000	577658	»	4645974	»
4322133	»	642438	»	547427	»	4772634	»	454437	»
4409239	6,000	4579260	»	4129974	»	800942	»	4322437	»
1974241	»	823800	»	470309	»	585834	»	808044	»
475765	»	483650	»	456966	»	983459	»	4735242	»
251439	»	484080	»	508689	»	760402	»	4540648	»
66379	»	4836968	»	383480	»	996636	»	554479	»
372455	»	642436	»	4729708	»	4878470	»	4878468	»

## 400 Ֆրանք շահող Թիւերը

39851	156969	356979	508686	684659	880023	4076250	4247362	4422062	4592470	4797956
39852	456970	359206	508687	684660	880024	4078654	4247363	4422063	4645974	4797957
39853	474446	359207	508690	725614	880025	4078652	4247364	4422064	4645972	4797958
39854	474447	359208	508921	725612	884861	4078653	4247365	4422065	4645973	4797959
39855	474448	359209	508922	725613	884862	4078654	4269476	4474866	4645975	4797960
50866	474449	359210	508923	725614	884863	4078655	4269477	4474867	4622876	4833366
50867	474450	366206	508924	725615	884864	4129974	4269478	4474868	4622877	4833367
50868	475761	366207	508925	760401	884865	4129972	4269479	4474869	4622879	4833368
50869	475763	366209	540491	760403	924986	4129973	4269480	4474870	4622880	4833369
50870	475764	366210	540492	760404	924987	4129975	4277122	4540646	4630446	4833370
66376	484076	372451	540493	760405	924988	4133984	4277123	4540647	4630447	4836966
66377	484077	372452	540494	764071	924989	4133982	4277124	4540649	4630448	4836967
66378	484078	372453	540495	764072	924990	4133983	4277125	4540620	4630449	4836969
66380	484079	372454	547426	764073	944571	4133984	4284261	4545604	4630450	4836970
72476	208246	383121	547428	764074	944572	4133985	4284262	4545602	4716441	4859601
72477	208247	383122	547429	764075	944573	4134261	4284263	4545603	4716442	4859602
72478	208218	383123	547430	790816	944574	4134262	4284264	4545604	4746113	4859603
72479	208249	383124	554476	790817	944575	4134263	4284265	4545605	4746114	4859604
72480	208220	383125	554477	790818	983456	4134264	4322438	4535961	4746115	4859605
85391	244326	383476	554478	790819	983457	4134265	4322439	4535962	4747511	4866261
85392	244327	383477	554480	790820	983458	4136731	4322440	4535963	4747512	4866262
85393	244328	383478	577656	798036	983460	4136732	4327496	4535964	4747513	4866263
85394	244329	383479	577657	798037	996637	4136733	4327497	4535965	4747514	4866264
85395	244330	429841	577659	798038	996638	4136734	4327498	4544366	4747515	4866265
93691	251136	429842	577660	798039	996639	4136735	4327499	4544367	4729706	4878466
93692	251137	429843	585832	798040	996640	4154401	4327200	4544368	4729709	4878467
93693	251138	429844	585833	800941	1004366	4154402	4359051	4544369	4729710	4878469
93694	251140	429845	585834	800943	1004367	4154403	4359052	4544370	4731906	4896371
93695	303496	435476	585835	800944	1004368	4154404	4359053	4547306	4731907	4896372
401446	303497	435477	595974	800945	1004369	4154405	4359054	4547307	4731908	4896373
401447	303498	435478	595972	808011	1004360	4462441	4359055	4547308	4731909	4896374
401448	303499	435479	595973	808012	1047526	4462442	4362451	4547309	4731910	4896375
401449	303200	435480	595974	808013	1047527	4462443	4362452	4547310	4735241	4897351
401450	345296	470306	595975	808015	1047528	4462444	4362453	4547506	4735243	4897352
411806	345297	470307	642437	823796	1047529	4462445	4362454	4547507	4735244	4897353
411807	345298	470308	642439	823797	1047530	4499727	4362455	4547508	4735245	4897354
411808	345299	470310	642440	823798	1057576	4499728	4693281	4547509	4739576	4897355
411809	345300	483646	644371	823799	1057577	4499729	4693282	4547510	4739577	4897356
411810	332461	483647	644372	837446	1057578	4499730	4693283	4579256	4739578	4897357
445456	332462	483648	644373	837447	1057579	4242521	4693284	4579257	4739579	4897358
445457	332463	483649	644374	837448	1057580	4242522	4693285	4579258	4739580	4897359
445458	332464	489446	644375	837449	1074976	4242523	4384836	4584801	4739581	4897360
445459	352496	489447	669634	837450	1074977	4242524	4384837	4584802	4739582	4897361
445460	352497	489448	669632	863576	1074978	4242525	4384838	4584803	4739583	4897362
451436	352498	489449	669633	863577	1074979	4246996	4384839	4581804	4752404	4897363
451438	352499	489450	669634	863578	1074980	4246997	4384840	4581805	4752405	4897364
451439	352500	499694	669635	863579	1076246	4246998	4409236	4592466	4772631	4974242
451440	356976	499692	684656	863580	1076247	4246999	4409237	4592467	4772632	4974243
456967	356977	499694	684657	880021	1076248	4247000	4409240	4592468	4772633	4974244
456968	356978	499695	684658	880022	1076249	4247364	4422061	4592469	4772635	4974245

# Վ Ա Ճ Ա Ռ Ա Տ ՈՒ Ն

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԳԱՇՆԱԿԱՑ  
ԵՐՈՒԱՆԴ ՅԱԿՈԲԵԱՆ

Վկայեալ դաշնակայարդար էՌԱՌԻ  
հռչակաւոր գործատան

Գնուամն եւ վաճառուամն

Փոխանակուրիւն հին դաշնակաց հետ

Կը վաճառուին ամէն տեսակ դաշնակներ ամսական վճարմամբ և մասնաւորաբար Գաղղիոյ լաւագոյն գործարաններէն Քլէնի դաշնակները, խիստ դիւրամատչելի գիններով:

Մասնաւոր յանձնարարութեամբ ամէն գործարանաց դաշնակներէն կը բերուին:

Վարձու նոր դաշնակներ չափաւոր գիններով:

Բաժանորդագրութիւն դաշնակաց յարգարման (accord):

Ա Ր Ո Ւ Ե Ս Տ Ա Ն Ո Յ

Դաշնակաց նորագութեան, գաղղիական ընտիր նիւթեղէններով:

ՀՐԱՆՄԱՆ Գ Դաշնակները չհինցնելու և լաւագոյն վիճակի մէջ պահելու:

Գաւառներէ եղած յանձնարարութիւնք ամենայն խնամով և փութով կը կատարուին:

Աւելի մանրամասնութեանց համար գիմել Բերա, Մեծ-Փողոց, Ղալաթա Սարայի դիմաց, Խրիսթաքի խան, Թիւ 10:

Անմրցելի աժանութիւն (6—30)

## Վ Ա Ն Ր Ա Մ Ս Վ Ա Ճ Ե Ա Ն

Վրենայի Երաժշտանոցէն ելած անւանի դաշնակահար մասնաւոր դատեր ստանձնելու համար կուտայ հետեւեալ հասցէն. Բերա, Գոմանտիկէրի նուագարանաց վաճառատունը, կամ ՄԱՂԻԿԻ Խմբագրատունը, Պահչէ-Գարու, Թաշխան, Թիւ 50:

Ա Չ Դ

1884 Յունուար 1էն մինչեւ 1891 Յունիս 30, 7 1/2 տարուան Արեւելք օրաթերթ պատրաստ կայ ծախու. կարելի է տեղեկանալ «Մաղղի» խմբագրատունէն:

ԱՐՏՕՆԱՍԻՐ Ա. ՍԱՔԱՅԵԱՆ

ՏՊԱԳՐ. ՆՏԱՆ Կ. ՊԷՐՊԷՐԵԱՆ  
Լսկի-Չոպքիէ փողոց, Ենի 61

# Վ Ա Ճ Ա Ռ Ա Տ ՈՒ Ն Ռ ՈՒ Ս Ա Կ Ա Ն Թ Է Յ Ե Ր ՈՒ Ն Ի Գ Օ Լ Ա Ե Ի Բ Օ Լ Ս Մ Ի Ր Ն Օ Յ Ե Ղ Բ Ա Ր Յ

Ղալաթիա, Ռուսական վանքին դիմաց, Այնիգօլա եկեղեցւոյն մօտ, Թիւ 30

Վաճառատունս՝ անցեալ տարւոյ Մայիսի սկիզբները բացուած լինելով, վաճառելի թէյերու տեսակներն եւ գիններն ի ստորեւ նշանակեալ, կը ծանուցանէ ի գիտութիւն յԱրգոյ հասարակութեան:

Թիւ 1. Լիանսին	Ֆունթ 32	Դահեկան
» 2. Չինական վարդ	» 30	»
» 3. Պուքէ էմբէրիալ	» 26	»
» 4. Ֆուչէֆու	» 20	»
» 5. Տնական Թէյ	» 16	»
» 6. Խնայողական տեսակը	» 12	»

Վերոյիշեալ թէյերը՝ մէկ, կէս և մէկ չորրորդ ֆունթնոց (133 արամ) ծրարներու մէջ ամփոփուած՝ մետաքսեայ եւ կապարեայ թղթով պատած, իրենց վըրայ կը կրեն վաճառատան կնիքն եւ ստորագրութիւնն: Սոյն թէյերը շաւուրեալ համար մթերանոցին մէջ մասնաւոր տեղ մը գրաւած են, ուր արգիլուած է նոյն իսկ ծխելն:

### ԶԳՈՒՇԱՆԱԼ ԿԵՂՇԵՐԷՆ

Անոնք որ կրնան որոշել թէյին լաւն ու վատը, կարող են իրր նմոյշ գնել վաճառատունէս փոքր ինչ և փորձել: Վաճառատանս միւս ճիւղն, որ ի Ռուսիա աշխարհածանօթ է արդէն:

Սոյն թէյեր կը վաճառին նաեւ ի Բերա, Թիւնելի դիմաց Ֆրաժէ վաճառատունը, Պոլիս Պահչէ գարու Շէյիսիւլիսլամ խան Թիւ 2 Միւսիւ Նիքիթիչ էրպէնիին մթերանոցը, Օրթագիւղ Թաշ նէրտիւպան փողոց Թիւ 5 Պ. Գրիգոր Միսկեանի դեղարանը, Իւսկիւտար Թաշ Տէմիրճիլէր փողոց Թիւ 25 Միւսիւ Աքէստօրիսիին դեղարանը և Գատըղիւղ Նպարավաճառ Բարաթանտօիին մթերանոցը Թիւ 19:

(2-18)

**ՏՊԱԳՐԻՉ ԵՒ ՓՈՐԱԳՐԻՉ**

**ՆՇԱՆ Կ. ՊԷՐՊԷՐԵԱՆ**

Կ. Պոլիս, Լսկի Չոպքիէ փողոց, Թիւ 61

---

Պատիւ ունի ծանուցանել Մեծ. Հասարակութեան թէ՛ չպատրաստ է տպագրել ամենայն խնամք եւ մաքրութեամբ թէ՛ պատկերազարդ եւ թէ՛ առանց պատկերի, Թուրքերէն. Հայերէն եւ Ֆրանսերէն լեզուաւ Օրագիրք, Հանդէսք, Գրքանք, Տեղեկագիրք, Հաշուեցոյցք, Շրջաբերականք, Հրահրագիրք Հարսանեաց, Նամակագրութք, Այցաբարդք, Մահազգք, եւ այլն:

Յոյարանս ունի 3000 է աւելի զանազան տպակերք, որ ձեռարար կը տրուին այն Հեղինակաց, որոց գործերն յանձնուած են իրեն, եւ պէտք եղածներն եւս կը փորագրուին չափաւոր գնով:

**ՎԱՅՐԿԵՆԱԿԱՆ ԱՅՑԱՔԱՐՏ**

ՄԱՆ. — Գաւառներէ եղած յանձնարարութիւնք ամենայն նշուրեամբ կը կատարուին, եթէ արժէքն ստուած հրամանին հետ դրկուի: